Հասարակական և հումանիտար գիտությունների արդի բնութագիրը

Է. Գզոյան, Ա. Մաիլյան, Լ. Ստեփանյան, Ս. Մկրտչյան, Մ. Շարամբեյան, Ն. Այվազյան

Համառոտագիր

Տեղեկագիրը ներկայացնում է հասարակական և հումանիտար գիտությունների արդի բնութագիրը, միջազգային զարգացման տեմպերը և միտումները: Ուսումնասիրվել է աշխարհի մի շարք առաջատար երկրների փորձը և ձեռնարկված քայլերը նշված բնագավառներում, ինչպես նաև համեմատական վերլուծություն է կատարվել նախկին ԽՍՀՄ երկրների հասարակական և հումանիտար գիտությունների առկա վիճակների միջև:

Տեղեկագիրը ներկայացնում է նաև հասարակական և հումանիտար գիտությունների ներկա վիճակը ՀՀ-ում: Ուսումնասիրությունն իրականացվել է գիտական կազմակերպությունների կողմից տրամադրված ՀՀ գիտական և գիտատեխնիկական գործունեությամբ զբաղվող կազմակերպության “Անձնագրի” տվյալների հիման վրա: Ուսումնասիրվել են նաև հումանիտար և հասարակական հետազոտություններով զբաղվող ոչ պետական ոլորտի կազմակերպությունները:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1.Ներածություն……..5

2.Միջազգային փորձի ուսումնասիրության աշխարհագրությունը……6

3. ՀՀԳ կառավարման համակարգում կատարված փոփոխությունների ժամանակագրությունը……7

4.ՀՀԳ կառավարման մոդելները……11

5.Որոշ երկրներում ՀՀԳ ոլորտի բարեփոխումների փորձից
Իռլանդիա……14
Շվեդիա…….....15
Մեծ Բրիտանիա…….....16
ԱՄՆ……16
Կանադա……17
Ավստրալիա……18

6. Իրավիճակը ետխորհրդային տարածաշրջանի երկրներում……..18

Բալթյան երկրներ……..19
Ռուսաստանի Դաշնություն……..21
Ուկրաինա, Բելառուս……23
Մոլդովա……25
Վրաստան……26
Ադրբեջան……27
Հայաստան……28
Ղազախստան……29
Ղրղզստան……30
Տաջիկստան……..30
Ուզբեկստան……32
Թուրքմենստան……32

7. Հումանիտար և հասարակական գիտությունների ներկա վիճակը Հայաստանի Հանրապետությունում……..35

8. Աղբյուրներ և գրականություն…….....79

1. Ներածություն

Հասարակական և հումանիտար գիտությունները (ՀՀԳ) կարևոր դերակատարություն ունեն հասարակության, քաղաքականության և գիտելիքահենք տնտեսության ձևավորման գործում, քանի որ ժամանակակից տնտեսությունները հենվում են ոչ միայն բնական և տեխնիկական գիտություններում կատարված և կատարվող հետազոտությունների, այլև հումանիտար և հասարակական գիտությունների վրա: Ներկա դարաշրջանում տեղի ունեցող քաղաքական և տնտեսական փոփոխություններն իրենց հետ բերում են հսկայական տեղաշարժեր նաև հասարակության ներսում, որի արդյունքում վերջիններս դառնում են ավելի բազմաբնույթ և բազմաշերտ:

Սակայն, միևնույն ժամանակ անհրաժեշտ է ընդգծել, որ ՀՀԳ վերագրված այս կարևոր դերակատարությունը պետությունների և հասարակությունների կողմից դեռևս հստակորեն և ամբողջովին գիտակցված չէ: Բնագավառը տարաբաժանված է, բացակայում է ՀՀԳ և քաղաքականություն, ինչպես նաև ՀՀԳ և հասարակություն կապը: Բնագավառի կարևորությունը գրեթե չի արժևորվում: Խոշոր տարաձայնություններ կան բնագավառի բացառիկ նշանակության և հասարակության, պետության և հետազոտական համայնքների կողմից վերջինիս հանդեպ ցուցաբերվող ուշադրության շատ ցածր աստիճանի միջև: Իհարկե, ստեղծված իրավիճակն ունի իր օբյեկտիվ հիմքերը: Պատճառներից մեկն այն է, որ հումանիտար և հասարակական գիտություններն իրենց բնույթով բավական տեղայնացված են և պարփակված պետական, և նույնիսկ որոշակի առարկայական սահմաններում: Միաժամանակ, ՀՀԳ ապագայի վերաբերյալ առկա վախերն ու մտորումներն ակնհայտորեն ընդգծում են պետության համար ցանկալի ապագայի կառուցման գործում ոլորտի հսկայական և աճող կարևորությունը [1]:

ՀՀԳ կողմից հասարակական պահանջների բավարարման խնդիրը բաղկացած է երեք տարրերից. որոնք են՝ հասարակական պահանջմունքները, ինչ կարող է

առաջարկել ՀՀԳ, և կարող են արդյոք գիտելիք ստեղծող հաստատություններն ապահովել անհրաժեշտ որակը [2, 3]: Ակնհայտ է, որ ոլորտում հաջողության հասնելու համար, նախևառաջ, անհրաժեշտ է ամուր կապեր ապահովել տարբեր գիտական համայնքների միջև: Անհրաժեշտ է նաև կապ ապահովել տարբեր առարկայական ոլորտների միջև, քանի որ կան խնդիրներ, որոնց լուծումները պահանջում են համալիր մոտեցում: Այսպիսով՝ բազմաառարկայությունը հետազոտության մեջ որոշիչ դեր է խաղում գիտելիքի ստեղծման նոր մեթոդների ընդունման գործում, ինչն իր հերթին կարող է նպաստել քաղաքական և սոցիալական պահանջմունքների առավել նպատակահարմար և արդյունավետ բավարարմանը: Պետք է նշել, որ ԱՄՆ-ն, ինչպես նաև եվրոպական և այլ երկրներ արդեն իսկ ընդունել են ՀՀԳ այս նոր դերը [4, 5, 6]:

2. Միջազգային փորձի ուսումնասիրության աշխարհագրությունը[1]

Հայաստանի ՀՀԳ ոլորտի հետ համեմատություն կատարելու համար ուսումնասիրվող երկրի ընտրությունը կատարվել է հետևյալ սկզբունքով. երկիրը պետք է ունենար զարգացած ՀՀԳ ոլորտ կամ իր մարդկային ռեսուրսներով, ներուժով համեմատելի լիներ Հայաստանի հետ, ունենար պատմաքաղաքական որոշակի ընդհանրություններ: Այս տեսակետից դիտարկվել են հետևյալ երկրները.

1) Իռլանդիա, հարավսլավոնական երկրներ, Բուլղարիա;
2) Առաջատար հզոր գիտահետազոտական պոտենցիալ ունեցող երկրներ՝ Արևմտյան Եվրոպայի երկրներ, Ավստրալիա, ԱՄՆ, Կանադա;
3) Նախկին ԽՍՀՄ հանրապետություններ:

[1] Տե՛ս Ա. Մայիլյան, Լ. Ստեփանյան, Է. Գզոյան, Ս. Մկրտչյան, **Հումանիտար գիտությունների կառավարման միջազգային փորձի համեմատական վերլուծություն**, *Հանրային կառավարում, 1/2011*, էջ 39-50:

3. ՀՀԳ կառավարման համակարգում կատարված փոփոխությունների ժամանակագրությունը

ՀՀԳ գործունեության ղեկավարման և, մասնավորապես, կազմակերպական փոփոխություններ կատարելու անհրաժեշտությունը համատարած կերպով առաջ է եկել սկսած 1990-ական թվականներից: Այդ տարիներին տարբեր երկրներում զուգահեռաբար կատարված միջոցառումների շարքը ցույց է տալիս, որ ոլորտում զարգացման տեղապտույտը գրեթե համընդհանուր բնույթ է կրել՝ անկախ երկրի ներուժից, չափերից կամ զարգացման աստիճանից:

Դիտարկենք տարբեր երկրներում կատարված փոփոխությունների ժամանակագրությունը: Գծապատկեր 1–ում բերված են եվրոպական և հյուսիսամերիկյան տարածաշրջանի մի շարք երկրներում ՀՀԳ կառավարման համակարգի բարելավման միջոցառումների (ռազմավարական ծրագրերի մշակում և ընդունում, նոր կառուցվածքային կառավարման միավորի ստեղծում ու հների վերափոխում և այլն) տարեթվերը՝ համադրված միջազգային կյանքում համընդհանուր զարգացումների հետ:

Գծապատկեր 1



Ինչպես տեսնում ենք, մեծ թվով առաջատար երկրներում ՀՀԳ բարելավման ուղղությամբ միջոցառումները կատարվել են 2000-2007 թթ., որին նախորդել է ոլորտի

վիճակի գնահատման, միջազգային փորձի ուսումնասիրության շրջանը: Ուստի նման խտացումը ցույց է տալիս, որ երևույթի սկզբնապատճառն ընդհանուր է և այն պետք է փնտրել նախորդ ժամանակաշրջանի համընդհանուր զարգացումների մեջ:

Որոնք էին օբյեկտիվորեն ծագած այն խնդիրները, որոնց լուծման համար անհրաժեշտ էր իրականացնել անհետաձգելի քայլեր: Վերլուծության համար անհրաժեշտ է հաշվի առնել ՀՀԳ բնորոշ գծերից մեկը. ՀՀԳ իրենց բնույթից ելնելով ուղղակիորեն ու խորն են արձագանքում հասարակական–քաղաքական փոփոխություններին, ինչպես նաև կրում են այդ գործընթացների ազդեցությունը: Նաև հենց սրանով պայմանավորված ՀՀԳ զարգացումն ունի իր առանձնահատկությունը. ընթանում է խիստ տարբերակված՝ ըստ երկրների, քաղաքական ճամբարների, գաղափարախոսության, տարածաշրջանների:

1990-ական թվականներին հասարակական-քաղաքական տեսակետից տեղի ունեցան հետևյալ օբյեկտիվ գլոբալ զարգացումներն, որոնք զգալի ազդեցություն թողեցին ՀՀԳ զարգացման միտումների վրա.

1. Նախ, տեղի ունեցավ ԽՍՀՄ-ի և սոցիալիստական երկրների քաղաքական ճամբարի փլուզումը: Միջազգային ասպարեզում սոցիալիստական ճամբարի անհետացման հետ զգալի փոփոխություն կրեց նաև ՀՀԳ ոլորտը, քանի որ ճամբարի շատ երկրներում գիտության այդ ճյուղերը մինչ այդ կրում էին խիստ գաղափարական ուղղվածություն. գերակայում էր մարքսիստական գաղափարախոսությունը: Փոփոխություններից առաջ սոցիալիստական ճամբարի երկրների ՀՀԳ մեջ թե՛ թվաքանակի և թե՛ որակի տեսակետից դոմինանտ դեր ունեին մարքսիզմի ուսումնասիրության կրթական հաստատություններն ու կենտրոնները, իսկ գիտական աշխատակիցների բանակում այդ ճյուղի ներկայացուցիչները զգալի թիվ էին կազմում:

Սոցիալիստական ճամբարի վերացման հետ Խորհրդային Միության նախկին հանրապետություններում և Արևելյան Եվրոպայի երկրներում գոյացավ գիտական աշխատուժի ավելցուկ՝ հիմնականում ի դեմս հասարակական գիտությունների ներկայացուցիչների: Մեծ թվով ՀՀԳ մասնագետների առջև ծառացավ կա՛մ վերարտակավորվելու, կա՛մ արտագաղթելու, կա՛մ էլ գիտության ասպարեզը թողնելու

խնդիրը: Նման փոփոխություններ ապրած երկրները ստիպված պետք է ընտրեին ՀՀԳ կառավարման նոր համակարգ կամ հիմնարար վերափոխումներ իրականացնեին հին համակարգերում:

2. Դիտարկվող ժամանկաշրջանում գլոբալ փոփոխությունների հաջորդ ալիքը պայմանավորված էր գլոբալ նշանակության նոր միավորի՝ Եվրամիության ձևավորման հետ: Վերջինիս կայացումը և հետագա ընդլայնումն առաջ բերեց այդ քաղաքական միավորին անդամակցած կամ թեկնածու երկրների գիտական և հետազոտական գործունեության ուղենիշների ու չափանիշների համապատասխանեցման խնդիրը, ինչը և դարձավ ՀՀԳ կառավարման մեջ փոփոխություն կատարելու հիմնական պատճառը: Եվրամիության երկրների ՀՀԳ հետազոտական կազմակերպություններն ու կենտրոններն իրենց գործունեությունը սկսեցին համապատասխանեցնել մյուս անդամ-երկրների հետ, բարձրացավ գիտության ինտեգրման աստիճանը: Այդ երևույթն էլ իր հերթին դարձավ այն դրդապատճառը, որն երևան հանեց ոլորտում առկա խնդիրները:

3. Հաջորդ գլոբալ փոփոխությունը կապված էր գիտատեխնիկական առաջընթացի հետ, որն ավելի համընդհանուր բնույթ էր կրում՝ առանձնանալով իր օբյեկտիվությամբ: Այդ շրջանում ձևավորվեցին և կյանքի բոլոր ոլորտներում վերջնականապես լայն կիրառություն գտան տեղեկատվական տեխնոլոգիաները (ՏՏ):

Սակայն ՏՏ ներթափանցումը ՀՀԳ ընթացավ դանդաղ, ինչն առաջին հերթին պայմանավորված էր ոլորտի բնույթով: ՏՏ ներմուծումը ՀՀԳ ընթացավ ոչ լիարժեք՝ ելնելով մի շարք պատճառներից, որոնց մեջ հատկապես կարևոր դեր էին խաղում տեղեկատվության ներկայացման, դյուրընկալության բարդությունը և զանազանությունը (ձեռագրեր, պատկերներ, ձայնագրություններ և այլն): Այդ պատճառով էլ ՀՀԳ ոլորտը համեմատաբար հետ մնաց հետազոտական նոր մեթոդների մշակման և յուրացման մեջ, ինչը առաջացրեց ճյուղի զարգացման տեմպերի անկում [7]:

Թվարկված երևույթների ազդեցությունն ուսումնասիրելուց հետո ձևակերպվեց ՀՀԳ ոլորտի կառավարման կազմակերպման հիմնական խնդիրը.

ՀՀԳ դինամիկ զարգացման ապահովման, հասարակության առաջադրած հիմնահարցերին լուծում տալու համար անհրաժեշտ է ունենալ գիտական

գործունեության կառավարման այնպիսի համակարգ, որն անկախ կլինի քաղաքական և, հատկապես, ներքաղաքական զարգացումներից և փոփոխություններից:

Այս խնդրին լուծում տալու անհրաժեշտությունից էլ բխել է անկախ հետազոտական կենտրոններ ստեղծելու գաղափարը, որը ներկայումս լայն կիրառություն է ստացել ողջ աշխարհում:

Ինչպես երևում է գծապատկեր 1-ից ԱՄՆ-ի, Կանադայի և Ռուսաստանի ՀՀԳ կառավարման մեջ փոփոխությունները կատարվել են ավելի վաղ, ինչի բացատրությունը պետք է փնտրել այդ երկրներում տեղի ունեցած հասարակական-քաղաքական իրադարձություններում:

ԱՄՆ-ում հասարակական գիտություններին ավանդաբար ավելի կիրառական դեր է հատկացվել: Վերջիններս հատկապես ուղղված են եղել դաստիարակելու այնպիսի քաղաքացիներ, որոնք նվիրված կլինեն ազատության, ժողովրդավարության, մարդու իրավունքների հիմնարար սկզբունքներին: Պատմականորեն 1960-70-ական թվականները համընկնում են Վիետնամի պատերազմի սաստկացման հետ, երբ պատերազմի անհեռանկարության պատճառով Միացյալ Նահանգներում հակապատերազմական շարժում է սկիզբ առնում: Այդ իրավիճակում պետական քաղաքականությանը սատարելու համար հասարակության ողջ ներուժը պետք է ուղղվեր հասարակության միասնության պահպանմանը: Այդ գաղափարներն էլ իրենց արտացոլումն են գտնում ԱՄՆ դաշնային մի նոր կառավարման մարմնի՝ Հումանիտար գիտությունների ազգային ֆոնդի հիմնադիր և ծրագրային փաստաթղթերում [8]:

1970-ական թվականներին զգալի փոփոխություններ տեղի ունեցան նաև Կանադայի գիտական միջավայրում՝ պայմանավորված երկրի ինքնավարության աստիճանի բարձրացման և բնակչության թվի կտրուկ աճի հետ: Միևնույն ժամանակ երկրի գիտության կառավարումը մասնատված էր հիմնականում տարբեր հասարակական և գիտական կազմակերպությունների միջև, ինչը խոչընդոտում էր արդեն իսկ ավելի լայն ինքնավարություն ձեռք բերած երկրի գիտական առաջընթացին: Իրավիճակը հաղթահարելու համար ստեղծվեց միասնական կառավարման կենտրոն՝ Կանադայի հումանիտար և հասարակական գիտությունների հետազոտական խորհուրդը [9]:

Նախկին ԽՍՀՄ հանրապետություններից առաջինը ՀՀԳ բարելավման քայլեր սկսեց ձեռնարկել Ռուսաստանը, ինչը պայմանավորված էր այն իրողությամբ, որ կոմունիստական գաղափարախոսությունն ուսումնասիրող հաստատությունների կառավարման կենտրոնների զգալի մասը նախկինում գտնվել էր այդ երկրում, և հասարակական-քաղաքական զարգացումների արդյունքում համակարգի կազմալուծումից հետո մեծածավալ աշխատուժի և հետազոտական բազմաքանակ հաստատությունների առկայությունը լուրջ սոցիալական խնդիրներ էր առաջ բերել հասարակության մեջ [10]:

4. ՀՀԳ կառավարման մոդելները

ՀՀԳ կառավարման համակարգերի բնույթի, կառուցվածքային առանձնահատկությունների, ստացված արդյունքների որակական և քանակական համեմատությունները ցույց են տալիս, որ ՀՀԳ կառավարման համար արդյունավետ մոդել է հանդիսանում հետազոտական խորհուրդը (ՀԽ): Արևմտյան երկրներում այն լայն տարածում է գտել որպես կառավարման նոր անկախ համակարգ [11]:

ՀԽ համակարգի կազմակերպական ձևերն ու գործունեությունը կախված են երկրում հաստատված քաղաքական, գիտական և հասարակական ավանդույթներից, երկրի գիտական ներուժից և նույնիսկ վերջինիս չափերից: Այս առումով ՀԽ-ները լինում են ընդհանուր (գծապատկեր 2ա) և հովանու տիպի (գծապատկեր 2բ):

Գծապատկեր 2ա



Գծապատկեր 2բ



1. Ընդհանուր համապետական ՀԽ՝ հիմնված ֆունկցիոնալ սկզբունքի վրա, իր ուրույն ներքին կառուցվածքով. գծապատկեր 2ա-ում բերված է ՀԽ կառուցվածքի Նորվեգիայի օրինակը [12]:

2. Հովանու տիպի ՀԽ՝ կազմված գիտության առանձին ճյուղերի համար: Նույն գծապատկերում բերված է Ֆինլանդիայի օրինակը [11]:

ՀՀԳ կառավարման տեսանկյունից գերակշռում են հովանու տիպի ՀԽ-ները, որոնց մեջ ՀՀԳ համար առանձին ենթաբաժին է նախատեսվում: ՀՀԳ համար առանձին գործող ՀԽ-ներն ավելի հազվադեպ են հանդիպում:

Մի շարք երկրներում ՀՀԳ-ը ֆինանսավորվում են նախարարությունների, (Սլովենիա, Պորտուգալիա), Գիտությունների ակադեմիայի (Չեխիա) կամ մասնագիտացված ազգային կենտրոնների միջոցով (Հունաստան) [11, 13]:

Հաճախ հանդիպում են նաև այնպիսի երկրներ, որտեղ գործող գիտական և պետական կառավարչական կազմակերպությունները թեև ունեն ներկայացված ՀԽ-ներին բնորոշ գծեր և կատարում են ՀՀԳ ոլորտի ծրագրեր, սակայն կրում են այլ անվանումներ:

Աղյուսակ 1-ում բերված են մի շարք երկրներում ՀՀԳ ոլորտը կառավարող ՀԽ-ների դասակարգումը:

Աղյուսակ 1

ՀԽ տեսակը	Երկիրը
ՀՀԳ ոլորտը կառավարող առանձին ՀԽ	Մեծ Բրիտանիա, Դանիա, ԱՄՆ, Նիդեռլանդներ, Կանադա, Ավստրալիա
ՀՀԳ բաժին ընդհանուր ՀԽ-ում	Ֆրանսիա, Իռլանդիա,Շվեդիա, Ֆինլանդիա, Ուկրաինա
Ինտեգրված (համախմբված) ՀԽ-ներ	Բելգիա, Գերմանիա, Իսլանդիա, Նորվեգիա, Շվեյցարիա, Էստոնիա, Կիպրոս
Այլ կազմակերպություններ որոնք գործում են որպես ՀԽ-ներ	Չեխիա, Լեհաստան Սլովակիա, Պորտուգալիա, Հունաստան

Չնայած ՀԽ-ների հիմնական գործառույթը ՀՀԳ ֆինանսավորումն է՝ աջակցելով կամ մասնակցելով այդ գործընթացին, սակայն նրանց գործունեության դաշտը, որպես կանոն, բազմազան է: Աղյուսակ 2-ում բերված են մի շարք երկրներում ՀԽ գործունեության տեսակները և գործունեության շրջանակները:

Աղյուսակ 2

Գործունեության շրջանակը	Երկիրը
Ծրագրերի ֆինանսավորում	Բոլորը, բացի Գերմանիայից
Միջազգային համագործակցության աջակցություն	Բոլորը
Հետազոտական ծրագրերի նախաձեռնում և իրականացման համակարգում	Մեծ Բրիտանիա, Ֆրանսիա, Գերմանիա, Շվեդիա, Ֆինլանդիա,Նիդերլանդներ, Նորվեգիա, Շվեյցարիա,
Հետազոտական քաղաքականու-թյան իրականացում (պետական ռազմավարության մշակում, խորհրդատվական գործառույթներ)	Չեխիա, Ֆինլանդիա, ԱՄՆ, Մեծ Բրիտանիա, Դանիա, Իսլանդիա, Շվեդիա, Նիդերլանդներ, Գերմանիա, Նորվեգիա, Էստոնիա, Բելգիա, Իռլանդիա, Կանադա, Պորտուգալիա,Հունաստան, Կիպրոս, Սլովենիա,
Գիտելիքի տարածում (ներառյալ գիտական հաղորդակցությունը)	Չեխիա, Մեծ Բրիտանիա, Շվեդիա, Ֆրանսիա, ԱՄՆ, Ավստրալիա,

Հետազոտությունների իրականացում	Հունաստան, Ֆրանսիա
Մշակութային ճառանգության պահպանում	Չեխիա, Ֆինլանդիա, Հունաստան

Ամփոփելով ՀՀԳ կառավարման միջազգային փորձի ուսումնասիրությունը՝ գալիս ենք հետևյալ եզրահանգումների.

1) ՀՀԳ կառավարման համակարգում բարեփոխումներ կատարելու անհրաժեշտությունն առաջացել է քաղաքական ու հասարակական լայնածավալ և խորը փոփոխությունների հետևանքում հաստատված իրողությունների արդյունքում,

2) Վերը նշված փոփոխությունների արդյունքում բոլոր առաջատար երկրներում իրականացվել են ՀՀԳ ոլորտի կառավարման համակարգի զարգացումը խթանող մի շարք միջոցառումներ,

3) ՀՀԳ ոլորտի զարգացման նպատակով հիմնականում կիրառվել և կիրառվում է հետազոտական խորհուրդների համակարգը,

4) ՀՀԳ զարգացման ուղղությամբ տրամադրված ֆինանսավորումը իրականացվում է գլխավորապես պետական բյուջեից, սակայն քաջալերվում է նաև այլընտրանքային ֆինանսավորումը, ինչը խիստ կարևորվում է ոլորտի զարգացման տեսանկյունից:

5. Որոշ երկրներում ՀՀԳ ոլորտի բարեփոխումների փորձից

Իռլանդիա

Իռլանդիայում ՀՀԳ վիճակի հետազոտությունները սկսվել են 1994 թվականից, որից հետո մշակվել է ՀՀԳ արդյունավետության բարձրացման ռազմավարական ծրագիր, որով ստեղծվել է անկախ մարմին՝ ՀՀԳ Հետազոտությունների իռլանդական կենտրոն: Վերջինս կոչված է առաջ մղելու ճյուղի հետագա զարգացումը: Խորհրդի հիմնական խնդիրներն են. մշակել ՀՀԳ ճյուղերի զարգացումն ապահովող քաղաքականություն, ստեղծել պայմաններ և հնարավորություններ, ինչպես նաև

հավասար մրցակցության ապահովման միջոցով աջակցել ավանդական մոտեցումներին, զարգացնել միջճյուղային և միջազգային համագործակցությունը ՀՀԳ և բնական գիտությունների միջև, հնարավորություններ ստեղծել գիտնականների միջև կապի հաստատման համար ինչպես երկրի սահմաններում, այնպես էլ երկրից դուրս, խորհրդատվություն ապահովել պետական մարմինների համար:

Կենտրոնը պետական բյուջեից ստանում և հետազոտական կենտրոններին է տրամադրում ֆինանսական միջոցներ [14]:

Շվեդիա

Շվեդիայի ՀՀԳ ՀԽ ստեղծվել է 2001 թվականին երկրի խորհրդարանի որոշմամբ և գործում է Շվեդիայի հետազոտական խորհրդի կազմում, որն էլ իր հերթին գործում է Կրթության և գիտության նախարարության կազմում: ՀԽ ֆինանսավորվում է պետական բյուջեից: Ծրագրերի ընտրության և ֆինանսավորման որոշումն ընդունվում է ՀՀԳ գիտական խորհրդը քննարկումների արդյունքում և մասնագետների խմբի, խորհրդականների մասնակցությամբ և աջակցությամբ:

ՀՀԳ գիտական խորհուրդը կազմված է նախագահից և 20 անդամներից, որոնցից 7 անդամներն ու 7 տեղակալները հանդիսանում են գործող գիտնականներ և ընտրվում են գիտական հասարակության կողմից:

ՀՀԳ գիտական խորհուրդի գործառույթներն են.

1. ապահովել ՀՀԳ ոլորտի գրանտների ծավալների աճը,
2. աջակցել ՀՀԳ միջավայրում տեղեկացվածության բարձրացմանը և հետազոտական աշխատանքների իրականացմանը,
3. համակարգել նոր սերնդի մասնագետների պատրաստումը և ապագայում նրանց կողմից կատարվելիք աշխատանքների և գիտական թեմաների ընտրությունը, որոնք պետք է ուղղված լինեն առողջապահության ոլորտի, բնապահպանության, էներգիայի, հասարակության և մշակույթի վերաբերյալ հետազոտություններին [15]:

Մեծ Բրիտանիա

Մեծ Բրիտանիայի ՀՀԳ առջև դրված խնդիրը հանգում է հետևյալ տեսլականին. արվեստի և հումանիար հետազոտությունների բանագավառում հասնել համաշխարհային ճանաչված դերի:

Այդ նպատակին հասնելու համար ստեղծվել է Արվեստների և հասարակական գիտությունների հետազոտության կոմիտեն, որը 2005 թվականին վերափոխվել է Արվեստների և հասարակական գիտությունների հետազոտական խորհդի (AHRC): Խորհրդի հիմնական խնդիրներն են.

1. օժանդակել ՀՀԳ ոլորտում համաշխարհային մակարդակի հետազոտական աշխատանքների իրականացմանը,
2. ուժեղացնել արվեստի և ՀՀԳ հետազոտական աշխատանքների ազդեցությունն այլ ոլորտների վրա, որտեղ դրանք կարող են դրական ազդեցություն ունենալ,
3. բարձրացնել արվեստի և ՀՀԳ դերը, նեցուկ լինել դրանց հասարակական, մշակութային և տնտեսական նշանակությունը:

Խորհուրդը տրամադրում է հետազոտական դրամաշնորհներ, անցկացնում ասպիրանտական դասընթացներ, տրամադրում այլ դրամաշնորհներ:

ԱՀՀԽ կառավարման մարմնի՝ Խորհրդի անդամները նշանակվում են Պետական քարտուղարի կողմից: Խորհուրդը ոլորտի բոլոր խնդիրների շուրջ խորհրդատվություն է տալիս կառավարությանը [16]:

Ամերիկայի Միացյալ Նահանգներ

Հումանիտար գիտությունների ազգային ֆոնդը անկախ ֆեդերալ գործակալություն է, որ ստեղծվել է 1965 թվականին: Ֆոնդը կոչված է զարգացնելու հումանիտար գիտություններն որպես ժողովրդավարական արժեքների պահպանման հիմնական գրավական, պահպանելու և սերունդներին փոխանցելու պատմության դասերը, դաստիարակելու գիտակից և կրթված քաղաքացիներ:

Իր նպատակները Ֆոնդն իրականցնում է մշակույթի, կրթության ոլորտում հետազոտական, ինչպես նաև հասարակական գործունեության ծրագրերին դրամաշնորհներ տրամադրելու միջոցով:

Դրամաշնորհները որպես կանոն լինում են թեմատիկ և տրամադրվում են թանգարաններին, արխիվներին, գրադարաններին, քոլեջներին, համալսարաններին, հանրային հեռուստատեսություններին, ռադիոկայաններին և առանձին հետազոտողներին:

Դրամաշնորհները նպատակ են հետապնդում հզորացնել հումանիտար գիտությունների ինստիտուցիոնալ հիմքերը, մշտապես հսկողություն սահմանել ոլորտի վրա՝ ապահովելու համար վերջինիս անխափան աշխատանքն ու մշտական զարգացումը [17]:

Կանադա

Կանադայի հումանիտար և հասարակական գիտությունների խորհուրդը ֆեդերալ գործակալություն է, որը ստեղծվել է 1977 թվականին երկրի խորհրդարանի որոշմամբ:

Խորհրդի խնդիրներն են.

1. ստեղծել կենսունակ և միջազգային ասպարեզում հայտնի հետազոտական միջավայր,
2. պատրաստել հմուտ մասնագետներ,
3. խթանել նոր մոտեցումներ և նորարարական գաղափարները,
4. ստեղծել կիրառական ճկուն համակարգ:

Խորհուրդը ղեկավարում է կառավարության կողմից նշանակված կառավարման խորհուրդը: Վերջինս ներկայացնում է գիտնականների, հասարակության և մասնավոր սեկտորի շահերը [18]:

Ավստրալիա

Ավստրալիայի Հումանիտար, հասարակական գիտությունների և արվեստների խորհուրդը օժանդակ մարմին է և հիմնադրվել է 2004 թվականին: Վերջինս ներկայացնում է հետազոտական, կրթական ոլորտներում աշխատող, հումանիտար գիտություններով և արվեստով զբաղվող մարդկանց շահերը: Խորհրդի անդամ են 122 կազմակերպություններ՝ համապատասխան ոլորտներից: Խորհրդի խնդիրներն են՝

1. ներկայացնել ոլորտի շահերը,
2. ապահովել ոլորտի և կառավարության միջև կապը,
3. քննարկումներ կազմակերպել հումանիտար գիտությունների, արվեստների և հասարակական գիտությունների ոլորտների միջև,
4. հզորացնել Ավստրալիայի իննովացիոն կարողությունները, ոլորտի և գիտության մյուս ճյուղերի միջև կապը՝ ավելի խոր փոխկապակցվածություն հաստատելով տեխնիկական գիտությունների և արդյունաբերության միջև:

Խորհրդի գործունեությունն ամբողջությամբ ֆինանսավորվում է պետական բյուջից: Մարմինը բաղկացած է վարչությունից և նախագահից, որոնք ընտրվում են քվեարկությամբ [19]:

6. Իրավիճակը ետխորհրդային տարածաշրջանի երկրներում[2]

ՀՀԳ ոլորտում փոփոխությունների անհրաժեշտությունն ետխորհրդային տարածաշրջանի երկրներում ակնհայտ դարձավ Խորհրդային Միության փլուզումից անմիջապես հետո, մինչդեռ աշխարհում ՀՀԳ-ում փոփոխությունների անհրաժեշտության մասին սկսել էին մտածել շատ ավելի վաղ: Առկա միտումներն

[2] Տե՛ս Է. Գզոյան, Ա. Մայիլյան, Լ. Ստեփանյան, Ս. Մկրտչյան, Ն. Այվազյան, **Հումանիտար և հասարակական գիտությունները հետխորհրդային տարածքում**, *21-րդ Դար, 3 (37),* Երևան 2011, էջ 61-79, նաև՝ Gzoyan E., Ayvazyan N., Mkrtchyan S., Mailyan A., Stepanyan L., **The Current State of Affairs in Humanities and Social Sciences in Post Soviet Area,** *Фундаментальные науки и практика, Сборник научных трудов, том 1, N4,* Томск 2010, с.199-204.

ակնհայտորեն ընդգծում էին համանման խնդիրների առկայությունը ետխորհրդային տարածաշրջանի բոլոր երկրներում:

Իհարկե, հասարակական և հումանիտար գիտություններն իրենց էությամբ ավելի պահպանողական են և իրենց վրա կրում են տվյալ երկրի գաղափարախոսությունն ու պատմությունը, ինչի պատճառով դժվար է խոսել նրանց անցյալ համագործակցության մասին, սակայն այս մոտեցումը կիրառելի չէ նախկին խորհրդային հանրապետությունների նկատմամբ: Չնայած գոյություն ունեցող մի շարք նմանությունների՝ ՀՀԳ ոլորտում առկա են բնորոշիչ առանձնահատկություններ կապված տվյալ երկրի պատմության, տնտեսական զարգացման և սոցիալական պայմանների հետ [Հավելված 1]:

Բալթյան երկրներ

Ետխորհրդային երկրների շարքում Բալթյան պետություններն առաջիններից էին, որոնք սկսեցին քայլեր ձեռնարկել ՀՀԳ ոլորտի բարեփոխման ուղղությամբ: Նրանք առաջինն էին, որ կարողացան հաղթահարել անցյալի գաղափարական և քաղաքական լուծը: Պետք է նշել, որ Բալթյան երկրները շատ մոտ էին կանգնած եվրոպական համայնքին և արժեհամակարգին, և, հետևաբար, վերափոխման և ինտագրման գործընթացներն այստեղ ընթացան ավելի բնականոն հունով և ավելի արագ: Դեռ մինչև խորհրդային կարգերի հաստատումը, Բալթյան պետություններն ամուր քաղաքական, տնտեսական և հասարակական կապեր ունեին Եվրոպայի հետ: ՀՀԳ ոլորտը ծանր կորուստներ կրեց հատկապես ստալինյան ժամանակաշրջանում: Պատմությունը, դասական լեզուները, աստվածաբանությունը հանվեցին գիտության օրակարգից: Դժվարություններից չխուսափեցին նաև ՀՀԳ մյուս ճյուղերը: Գաղափարական ճնշումների և սահմանափակումների հետևանքով առաջընթաց չէր գրանցվում պատմության, քաղաքական և տնտեսական գիտությունների բնագավառում: ՀՀԳ վերաբերյալ գիտական գրականությունը տպագրվում էր միայն ռուսերեն լեզվով և որևէ տարբերակ ներթափանցելու միջազգային գիտական համայնք կամ ամսագրեր չկար: Ֆինանսական միջոցները խիստ սակավաթիվ էին և ուղղված էին որոշակի խնդիրների

լուծմանն ու պետական պատվերի կատարմանը: Իրավիճակը սկսեց փոխվել 1990-ականների կեսերից:

Այս պահից սկսած (և ոչ միայն Բալթյան պետություններում) տեղի ունեցավ գիտական կյանքի վերածնունդը: Բալթյան պետություններում այս գործընթացն ավելի ակնառու և արագ ընթացավ Լատվիայի, Լիտվայի և Էստոնիայի՝ Եվրամիությանն անդամագրվելուց հետո (2004 թ-ին Բալթյան երեք պետությունները դարձան ԵՄ անդամ):

Ներկայումս Բալթյան պետություններում իրականացվում է գիտության ոլորտի համակարգված վերափոխման քաղաքականություն: Այս նպատակով ստեղծվել են մի շարք գիտական կազմակերպություններ, հիմնադրամներ և գերազանցության կենտրոններ: Մեծ ուշադրություն է դարձվում նաև ՀՀԳ ոլորտին, որի բարելավման նպատակով մշակվել և ընդունվել են զարգացման ռազմավարական ծրագրեր. Հետազոտությունների զարգացման Լատվիայի հանրապետության ազգային կոնցեպցիան, Լիտվայում Հասարակական և հումանիտար գիտությունների զարգացման ռազմավարությունը, Էստոնիայում հասարակական և հումանիտար գիտություններում հետազոտությունների իրականացման կազմակերպման և քաղաքականության մշակման ծրագիրը:

Վերոհիշյալ ռազմավարական ծրագրերի հիմնական դրույթները կարելի է ընդհանրացնել հետևյալ կետերում. էներգիայի ոլորտում սոցիալ-տնտեսական խնդիրների լուծում, ազգային պաշտպանություն և անվտանգություն, առողջապահություն, բնապահպանություն, ազգային մշակույթի և արժեքների, պատմության, լեզվի, պետականության պաշտպանություն ու պահպանում և այլն:

Բալթյան պետություններում ՀՀԳ զարգացման առանձնահատկություններից մեկը գիտական համայնքների ակտիվ ներգրավվածությունն է միջազգային հետազոտական կազմակերպություններում, ինչը մեծ կարևորություն ունի ՀՀԳ զարգացման տեսանկյունից: Բալթյան երկրները հանդիսանում են եվրոպական և միջազգային տարբեր գիտական կազմակերպությունների անդամ: Բալթյան երկրների գիտնականները հաջողությամբ մասնակցում են Եվրամիության շրջանակային

ծրագրերում (դրամաշնորհային): Էստոնիայի Գիտության Հիմնադրամը, Գիտությունների ազգային ակադեմիան, ինչպես նաև Լիտվայի Գիտության և հետազոտությունների պետական հիմնադրամը հանդիսանում են Գիտության եվրոպական հիմնադրամի անդամներ [10]: Խորհրդային տարիներին գիտության ֆինանսավորումն իրականացվում էր պլանավորված համակարգով և գիտության համար նախատեսված գումարները տրամադրվում էին Կրթության նախարարությանն ու Ազգային ակադեմիային: Կային նաև ինստիտուտներ, որոնք ֆինանսավորվում էին այն նախարարությունների կողմից, որոնց կից իրենք գործում էին: 1990-ական թվականներից սկսած փոփոխություններ տեղի ունեցան նաև այս համակարգում: Ստեղծվեցին մի շարք հիմնադրամներ, որոնք նպատակ էին հետապնդում փոխել ֆինանսավորման նախկին կարծրատիպերը: Հիմնադրամները սկսեցին ֆինանսավորել նպատակաուղղված հետազոտությունները և զարգացման ծրագրերը՝ փորձագիտական քննության միջոցով: Ավելացել են նաև ՀՀԳ ոլորտի պետական հատկացումները: Վերջին տարիներին իրականացվում է նաև պետական հատուկ ծրագիր, որը նպատակ ունի պահպանել ազգային մշակութային արժեքները: Սակայն, այս ամենով հանդերձ ՀՀԳ ոլորտի ֆինանսավորումը շարունակում է մնալ շատ ցածր, հատկապես ԵՄ երկրների համեմատությամբ, ինչն էլ իր հերթին բերում է ոլորտի նկատմամբ երիտասարդ մասնագետների հետաքրքրության նվազմանը: Բալթյան երկրներում ՀՀԳ ոլորտի երիտասարդ մասնագետների թիվը դեռևս հեռու է բավարար լինելուց [20, 21]:

Պատմական թույլ ժառանգության հետ կապված ավելի վատ է քաղաքագիտության, կառավարման և տնտեսագիտության որոշ ճյուղերի վիճակը: Այս դրությունը շտկելու համար մշակվում են միջճյուղային հետազոտական նախաձեռնություններ, որոնք նախատեսում են միավորել տարբեր ուղղությունների գիտնականներին [22, 23, 24]:

Ռուսաստանի Դաշնություն

Ռուսաստանի Դաշնությունը գիտության տեսակետից գտնվում է համեմատաբար ավելի շահեկան դիրքերում, քանի որ ԽՄ տարիներին հանդիսանում էր գիտության կազմակերպման կենտրոնը: Ավելին, Ռուսաստանի գիտությունը համեմատական

առումով պահպանել է իր ներուժը՝ չնայած 1990-ականների տեղի ունեցած գիտնականների հսկայական արտահոսքին: Նույն թվականներին նույնիսկ որոշակի առաջընթաց է գրանցվել գիտության այնպիսի ճյուղերում, ինչպիսիք են քաղաքագիտությունն ու տնտեսագիտությունը: ՀՀԳ ոլորտի հետազոտական կազմակերպությունների և բուհերի թվին ավելացան բազմաթիվ հետազոտական միություններ և ցանցեր: Ստեղծվեցին նաև ՀՀԳ ոլորտի էլեկտրոնային ցանցեր, որոնցից է օրինակ Հասարակական և հումանիտար գիտությունների ռուսական էլեկտրոնային ցանցը, ինչպես նաև միացյալ հետազոտական կենտրոններ, միավորումներ և տարբեր նախաձեռնություններ [25, 26]:

Ռուսաստանում ՀՀԳ ոլորտի կտրուկ զարգացումը սկսվեց 1994 թվականին, երբ կառավարության որոշմամբ ստեղծվեց Հումանիտար գիտությունների հիմնադրամը: Վերջինս ընդգրկում է հումանիտար և հասարակական գիտությունների լայն շրջանակ՝ սկսած դասական առարկաներից (փիլիսոփայություն, պատմություն, բանասիրություն) մինչև ժամանակակիցները (բնապահպանություն, նորարարական տնտեսագիտություն, առողջապահության հասարակական բնագավառը): Հիմնադրամի ջանքերով ստեղծվել է հումանիտար գիտությունների վերաբերյալ հատուկ բազա, որն ընդգրկում է Ռուսաստանի ՀՀԳ վերաբերյալ ողջ տեղեկատվությունը: Հիմնադրամը ստեղծել է նաև փորձագիտական հզոր համակարգ: Հիմնադրամի գործառույթներից մեկը հանդիսանում է տեղական ծրագրերի ֆինանսավորումը, որը նպատակ է հետապնդում հավասարակշռել ՀՀԳ զարգացումը դաշնության տարբեր մասերում, ինչպես նաև՝ նպաստել ոլորտի խորքային զարգացմանը: Մեծ ուշադրություն է դարձվում միջառարկայական, միջտարածաշրջանային և միջպետական համագործակցությանը, ՀՀԳ հետազոտություններում բուհերի ներգրավվածության խթանմանը, ԱՊՀ և արտասահմանյան գիտնականների հետ համագործակցության ծավալների մեծացմանը, հասարակական գիտությունների շրջանակի ընդլայնմանը, ՀՀԳ ոլորտի տեղեկատվական-նյութական բազայի ամրապնդմանը: Ընդհանուր առմամբ, Ռուսաստանի դաշնությունում հումանիտար և հասարակական գիտությունների ոլորտը

կարելի է բնութագրել որպես զարգացող: Չնայած առկա բազմաթիվ խնդիրների՝ միտումները բավական լավատեսական են [27]:

Ուկրաինա, Բելառուս

Հումանիտար գիտությունների զարգացումը ետխորհրդային այս երկրներում նշանավորվեց Հիմնարար հետազոտությունների հիմնադրամների ստեղծմամբ: Գիտության ընդհանուր ուղղությունների մեջ հումանիտար և հասարակական գիտությունները զբաղեցրին իրենց կայուն և կարևոր դերը: Բելառուսի Հիմնարար գիտությունների հիմնադրամը ստեղծվեց 1991 թվականի մարտին, որը նպատակ էր հետապնդում ավելացնել հիմնարար և փորձարարական հետազոտությունները բնական, տեխնիկական և հումանիտար գիտություններում՝ դրամաշնորհային համակարգի միջոցով: Վերջինս իրականացվում է մրցակցային հիմունքներով առաջնահերթություն ներկայացնող բնագավառներում: Հիմնադրամի գործառույթները ներառում են երիտասարդ մասնագետների խրախուսում, արտասահմանյան գիտական կազմակերպությունների հետ համատեղ ծրագրերի ֆինանսավորում, գիտական աշխատանքների հրատարակման ֆինանսավորում, միջազգային գիտաժողովների, կոնֆերանսների և այլ գիտական միջոցառումների կազմակերպման խրախուսում [28]: 2002 թվականից Բելառուսի գիտական ոլորտը սկսեց փոփոխություններ կրել, որի արդյունքում գիտությունը և տեխնոլոգիաները սկսեցին կենտրոնանալ հատուկ տնտեսական ուղղությունների վրա: Բելառուսի Ֆունդամենտալ գիտությունների հիմնադրամը միավորվեց Բելառուսի Գիտությունների ազգային ակադեմիայի հետ, որը գերակա դիրք ստացավ գիտական հետազոտությունների բնագավառում (գիտական հետազոտությունների մոտ 70%-ը իրականացվում է Ակադեմիայում): Վերջինս բաղկացած է ավելի քան 50 ինստիտուտներից, բաժիններից և կենտրոններից:

Երկրի կառավարության կողմից ընդունված գիտության առաջնահերթությունների շարքում իրենց տեղը ունեն ՀՀԳ հետևյալ ուղղությունները. առողջապահություն, բնական միջավայրի պաշտպանություն, տեղեկատվության տարածում և հեռահաղորդակցություն, մշակութային արժեքների պահպանություն և

այլն:

Բելառուսի գիտնականները ակտիվորեն համագործակցում են արտասահմանյան գիտական համայնքների հետ, մասնակցում են Եվրամիության տարբեր ծրագրերի (INCO, INTAS, ISTC): Բելառուսի գիտնականների կողմից իրականացվող միջազգային հետազոտությունների 29%-ը կազմում են կյանքի մասին գիտություններն ու բնության պաշտպանությունը: 2002 թվականի հունվարին Բելառուսի կառավարությունն ընդունեց երկրի ֆունդամենտալ գիտական հետազոտությունների առաջնայնությունների վերաբերյալ փաստաթուղթ, որտեղ իրենց կարևոր տեղն են զբաղեցնում հումանիտար և հասարակական գիտությունները [26]:

Ուկրաինայի գիտության աջակցության ռազմավարական ուղղությունների շարքում հումանիտար և հասարակական գիտությունները ևս զբաղեցնում են իրենց կայուն տեղը: Սակայն կառավարության կողմից ընդունված գիտության զարգացման ռազմավարության իրականացումնբ, ինչպես նաև գիտության ուղղությամբ իրականացվող քաղաքականությունն երկրի իշխանությունների համար շարունակում է մնալ որպես մարտահրավեր: Գիտության և տեխնոլոգիաների զարգացման ուղղությամբ ձեռնարկված բարեփոխումները մնացել են անավարտ, քանի որ տրամադրված ֆինանսների սղությունը մեծապես խափանում է արմատական բարեփոխումների իրականացումը: Լիովին չեն իրականացվում նաև հետազոտական ինստիտուտների վերակազմավորման աշխատանքները, և չնայած ոլորտում մի շարք նոր կառույցների առկայության, դեռևս շարունակում են գործել բազմաթիվ հին ինստիտուտներ: Կազմակերպությունների այս երկակիությունն էլ ավելի է բարդացնում ոլորտի կառավարման կազմակերպումը:

Եվրամիության և Ուկրաինայի միջև գիտական համագործակցությունը կարգավորվում է ԵՄ-Ուկրաինա գործընկերության և համագործակցության, ինչպես նաև գիտության և տեխնոլոգիաների բնագավառում համագործակցության համաձայնագրերով [26]:

Ուկրաինայի Հիմնարար գիտությունների հիմնադրամը ստեղծվել է 1992 թվականի մարտին: Վերջինս գիտական հետազոտությունների ֆինանսավորումը

նույնպես իրականացնում է դրամաշնորհային համակարգի միջոցով: Հիմնադրամի կողմից աջակցվող ուղղություններից են հումանիտար գիտությունների հիմնարար բնագավառները, բնության պաշտպանությունը (այս ուղղությունը հսկայական նշանակություն ունի Ուկրաինայի համար), գիտության և կրթության ոլորտի հիմնախնդիրները: Հիմնադրամը սերտ կապերի մեջ է Ռուսաստանի հիմնարար գիտությունների հիմնադրամի հետ, որի հետ իրականացվում են մի շարք համատեղ ծրագրեր հասարակական և հումանիտար գիտությունների բնագավառում՝ նպատակ հետապնդելով զարգացնել փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող մի շարք ուղղությունները և համատեղել ուժերը ՀՀԳ վիճակը բարելավելու համար:

Մոլդովա

Եոխորհիրադային մյուս հանրապետությունների պես Մոլդովան ևս կանգնած է միևնույն խնդիրների լուծման անհրաժեշտության առջև. աղքատության վերացում, բնակչության կենսամակարդակի բարելավում, բնապահպանական և բնապաշտպանական խնդիրների լուծում և այլն: Առաջնահերթությունների շարքում է նաև տարածաշրջանային և միջազգային գիտական համայնքի հետ ինտեգրումը: Մոլդովայի հանրապետության և ԵՄ միջև գիտական ոլորտի համագործակցությունն իրականացվում է 1994 թվականին կնքված համագործակցության և գործընկերության վերաբերյալ համաձայնագրով: Երկրի նախագահի կողմից ստեղծվել է նաև հատուկ մարմին՝ Եվրոպական ինտեգրման հանձնաժողով, որը կոչված է ընդլայնելու և խորացնելու համագործակցությունը Եվրոպայի հետ:

Մոլդովայի հանրապետության 2003-2010 թթ. գիտության զարգացման ռազմավարության և հետազոտությունների ֆինանսավորման ուղղությունների մեջ ընդգրկվել են ՀՀԳ հետևյալ ոլորտները. Տնտեսագիտությունը, առողջապահությունը, երկրի սոցիալ-տնտեսական վերականգնումը և զարգացումը, ազգային մշակութային և պատմական ժառանգության պաշտպանությունն ու պահպանումը:

Հանրապետության գլխավոր գիտական կազմակերպությունը հանդիսանում է Գիտությունների ազգային ակադեմիան [26]:

Վրաստան

Անկախության ձեռքբերումից հետո ետխորհրդային տարածաշրջանի բոլոր երկրներում ՀՀԳ վիճակը գրեթե նույնն էր. բացառություն չէր նաև Վրաստանը: Բալթյան պետությունների պես վրացական գիտական համայնքը ևս գիտության վերաբերյալ իր նախապատմությունը կապում է Եվրոպական համայնքի հետ, և հաշվի առնելով այս հանգամանքը՝ վրացի գիտնականներն իրենց համար համառորեն ուղղի են հարթում դեպի Եվրոպա:

Վրաստանի գիտական և կրթական ոլորտը սկսեց վերելք ապրել 2004 թվականից, երբ սկսեցին իրականացվել արմատական բարեփոխումներ: Վերակազմավորման այս շրջանի հիմնական նպատակը հանդիսանում էր ազգային գիտական առաջնայնությունների ուրվագծումը, պետական ֆինանսների բաշխման անաչառ մրցակցային համակարգի ստեղծումը, բարձրագույն կրթության և հետազոտության ինտեգրումը միջազգային հանրությանը, գիտելիքահենք տնտեսության և մրցակցային միջավայրի ստեղծումը: Գիտության բնագավառում ամենաառաջընթաց քայլերից էր նոր ֆինանսավորման համակարգի ներդրումը, որը հնարավորություն ընձեռեց երկրի բոլոր գիտական և հետազոտական կազմակերպություններին, բուհերին, ոչ-պետական կազմակերպություններին, ինչպես նաև անհատ հետազոտողներին մրցակցային և օբյեկտիվ հիմքերի վրա ստանալ ֆինանսավորում: ՀՀԳ ոլորտի բարեփոխման նպատակով 2007 թվականին հիմնվեց Ռուսթավելու անվան վրացագիտության, հումանիտար և հասարակական գիտությունների հիմնադրամը, որը հսկայածավալ դրամաշնորհային ծրագրեր է իրականացնում նշյալ ուղղություններում իրականացվող հետազոտությունների համար: Հիմնադրամը հատկապես մեծ ուշադրություն է դարձնում վրացագիտության զարգացման անհրաժեշտության վրա, որն ընդգրկում է Վրաստանին վերաբերող առարկաների մի լայն շրջանակ: Վրացագիտության հանդեպ այս ուշադրությունը պայմանավորվում է ազգային, պատմական, մշակութային արժեքները պահպանելու և սերունդների փոխանցելու անհրաժեշտությամբ: Հիմնադրամն իրականացնում է մի շարք ծրագրեր դրամաշնորհների (թեմատիկ, պետական հետազոտական ծրագրերի, կոնֆերանսների, ճանապարհորդական),

ֆելոուշիփերի և այլ ծրագրերի միջոցով (վրացի և արտասահմանյան գիտնականների հետ հանդիպումների և կոնֆերանսների, միջազգային այցերի և այլ միջոցառումների կազմակերպում): Հիմնադրամն ակտիվորեն աշխատում է ընդլայնելու իր գործունեության տարածքը և ծավալները: Հիմնադրամի առաջնայնությունների շարքում է միջազգային գիտական ամսագրի ստեղծումը, ինչպես նաև վրացագիտության ուղղությամբ ամառային դպրոցի կազմակերպումը: Հիմնադրամը նախատեսում է նաև ստեղծել online հետազոտական պորտալ, որը համակողմանի տեղեկատվություն կտրամադրի վրացագիտության, հումանիտար և հասարակական գիտությունների վերջին զարգացումների վերաբերյալ: Այն նաև կծառայի որպես պլատֆորմ ինչպես երկրի ներսում, այնպես էլ վերջինիս սահմաններից դուրս համագործակցության համար [29]:

Վրաստանում ՀՀԳ ուղղությամբ իրականացվող քաղաքականությունն ընթանում է ԵՄ հետ համագործակցության ծրագրերի համատեքստում: Վրաստանի գիտական համայնքը մասնակցում է մի շարք հետազոտական-տեխնոլոգիական զարգացման ծրագրերի: Միջազգային կազմակերպությունների աջակցությամբ Վրաստանում ստեղծվել են նոր բուհեր և ծրագրեր [26]:

Ադրբեջան

Ադրբեջանի գիտական համայնքի կառավարումն իրականացվում է Գիտությունների ազգային ակադեմիայի կողմից և վերջինիս շրջանակներում: Չնայած նավթից ստացվող հսկայական եկամուտների՝ գիտությանը տրամադրվող հատկացումները շատ քիչ են: Արտասահմանցի փորձագետների գնահատմամբ գիտությունն Ադրբեջանում չի հանդիսանում պետական առաջնահերթություն [30]:

Բավական թույլ է նաև կապը ԵՄ և միջազգային այլ գիտական համայնքների հետ: FP6 և FP7 ծրագրերի կողմից ֆինանսավորումը շատ քիչ է, և հիմնականում իրականացվում է արտասահմանյան կազմակերպություններում ընդգրկված ադրբեջանցի գիտնականների կողմից: Ադրբեջանը ընդգրկված է <<Սևծովյան տարածաշրջանի երկրներ գիտության և տեխնոլոգիաների համագործակցության>>

աշխատանքային խմբի մեջ [26]:

ՀՀԳ ուղղությամբ իրականացված ամենամեծ նախաձեռնությունը Միջազգային գիտական ամսագրի ստեղծումն էր Ադրբեջանում, որը բացի ՀՀԳ ոլորտից ընդգրկում է գիտության գրեթե բոլոր ճյուղերը:

Հայաստան

Դեռևս 2002 թվականին Հայաստանի հանրապետության կառավարության կողմից ընդունվել է <<Հայաստանում գիտության և տեխնոլոգիայի ուղղությունների առաջնահերթությունները>> փաստաթուղթը, որը մատնանշում էր գիտության և տեխնոլոգիաների զարգացման ուղղությունները Հայաստանում: Սակայն, չնայած առաջնահերթությունների վերաբերյալ փաստաթղթի ընդունման, վերջինիս իրականացումը գտնվում էր ցածր մակարդակի վրա: Ֆինանսավորումը քիչ էր, իսկ գիտության և տեխնոլոգիաների ոլորտի կառավարումը լուրջ բարեփոխումների անհրաժեշտություն ուներ: 2010 թվականի մայիսին ՀՀ կառավարությունը ընդունեց ՀՀ գիտության և տեխնիկայի զարգացման 2010-2014 թթ. գերակայությունների վերաբերյալ նոր փաստաթուղթը, որի մեջ ի թիվս այլ գիտական ուղղությունների մտան նաև հայագիտությունը, հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական գիտությունները: Հայագիտության ոլորտի առաջնակարգ նշանակությունից ելնելով՝ ՀՀ կառավարությանը կից ստեղծվել է Հայագիտության խորհուրդ, որը պետք է համակարգի ոլորտում իրականացվող աշխատանքները, նպաստի հայագիտության զարգացմանը: Գիտության պետական կոմիտեն ՀՀ կառավարությանն է ներկայացրել նաև հումանիտար և հասարակական գիտությունների զարգացման հայեցակարգ [31]:

Այսօր ՀՀԳ ոլորտում իրականացվող հետազոտությունները կենտրոնացված են հետազոտական ինստիտուտներում, ոչ-կառավարական կազմակերպություններում և բուհերում: ՀՀԳ ոլորտի բարեփոխումների մեջ մեծ անհրաժեշտություն և կարևորություն է ներկայացնում ֆինանսավորման համակարգի վերափոխումը, գիտությանը հատկացվող ֆինանսավորման ծավալների աճը: Իրականացվող բարեփոխումները պետք է տանեն դեպի ֆինանսական հատկացումների թափանցիկ և օբյեկտիվ

համակարգի ներդրմանը: Անդրանիկ քայլերն են կատարվում միջազգային փորձագետների համակարգի միջոցով պետական դրամաշնորհային ծրագրերի իրականացման ուղղությամբ:

ՀՀԳ ոլորտում մեծ բացթողում է նաև միջազգային չափանիշներին համապատասխան գիտական ամսագրերի բացակայությունը, ինչը սահմանափակում է ոլորտի օգտակարության և միջազգայնացման չափը: Մեծ անդունդ կա ՀՀԳ ոլորտում տեղական և արևմտյան արժեքների և մոտեցումների հարցում: Հետազոտությունների թեորետիկ և մեթոդոլոգիական հիմքերը խիստ տարբերվում են միջազգային գործող չափանիշներից և արագ վերափոխման անհրաժեշտություն ունեն: Ակնհայտ թուլություն է երիտասարդ կադրերի սակավության խնդիրը [32]:

Հայաստանի անդամակցությունը ԵՄ գիտական ծրագրերին իրականացվում է Եվրոպայի Հարևանության քաղաքականության ծրագրի շրջանակներում: Սակայն, պետք է նշել, որ ի տարբերություն միջազգային այլ ծրագրերի, ԵՄ չափաբաժինը Հայաստանում բավական փոքր է [26]:

Ղազախստան

Ղազախստանում հետազոտությունների և տեխնոլոգիաների կառավարումն իրականացվում է Կրթության և գիտության նախարարության գիտության բաժնի և Գիտությունների ազգային ակադեմիայի կողմից: Ակադեմիան իրականացնում է հանրապետության գիտության ոլորտի հիմնական կառավարումը: Իրականացվող քաղաքականությունը միտված է արտադրության և գյուղատնտեսության համար առաջընթաց տեխնոլոգիաների մշակմանը: ՀՀԳ ոլորտում առաջնահերթություն է հանդիսանում Ղազախստանի կայուն զարգացման ազգային գաղափարը, որն ընդգրկում է ինչպես անհատի հարմոնիկ զարգացմանը, ազգային ոգու ամրապնդմանն ու բարձրացմանն ուղղված ծրագրեր, այնպես էլ սոցիալ-տնտեսական, մշակութային, կրթական, պետական շահի, աշխարհաքաղաքական առաջնայնությունների, ազգային անվտանգության պաշտպանության և այլ ուղղություններ:

Ղազխստանի Գիտությունների ազգային ակադեմիան պատասխանատու է նաև

երկրի միջազգային գիտական կապերի համար: Ներկայումս Ակադեմիան ունի գիտական համագործակցության մի շարք համաձայնագրեր արտասահմանյան երկրների հետ, ինչպես նաև համաձայնագրեր՝ համատեղ գիտական ծրագրերի իրականացման ուղղությամբ [26]:

Ղրղզստան

Ղրղզստանում ևս գիտության ոլորտի գլխավոր դերակատարները հանդիսանում են Գիտությունների ազգային ակադեմիան և կառավարությանը կից Գիտության և մտավոր սեփականության գործակալությունը:

Ղրղզստանն ակտիվորեն մասնակցում է միջազգային գիտական և տեխնոլոգիական ծրագրերին, որոնցից շատերը նախատեսված են հենց նախկին ԽՍՀՄ երկրների համար: ԵՄ օժանդակության միջոցով իրականացված ամենամեծ և հաջողակ ծրագրերից է հանդիսանում <<Իսիկ-Կյուլ լճի շրջակա միջավայրի փոփոխությունների և կանխատեսումներ>> ծրագիրը, որը հսկայական նշանակություն ունի երկրի համար:

2003 թվականին Գիտությունների ազգային ակադեմիայի նախագահության կողմից ընդունվել է Ղրղզստանի գիտության առաջնահերթությունների ցուցակը, որի 10 և 11-րդ կետերը վերաբերում են ՀՀԳ ոլորտին. կայուն քաղաքական, տնտեսական և սոցիալական զարգացում, երկրում բնակվող ազգերի ազգային լեզվի, քաղաքական և մշակութային առանձնահատկությունների ուսումնասիրում [26]:

Տաջիկստան

Տաջիկստանում ՀՀԳ ոլորտի գնահատման տեսանկյունից մեծ կարևորություն է ներկայացնում Աղա Խան զարգացման ցանցի (AKDN) առաքելությունը Տաջիկստանում, որը նպատակ է հետապնդում ստեղծել տնտեսապես դինամիկ, քաղաքականապես կայուն, մտավոր առումներով աչքի ընկնող և մշակութային տեսանկյունից հանդուրժողական մի երկիր [33]: Նպատակի իրականացման համար կազմակերպությունն օժանդակում է տարբեր ծրագրերի և ինստիտուտների ստեղծմանը, որոնք նպատակ են հետապնդում ակտիվացնել կառավարության, մասնավոր սեկտորի և քաղաքացիական հասարակության դերը ժողովրդավարական հասարակությունում:

Ցանցը համախմբել է առանձին գործող գործակալությունների՝ սկսած կրթությունից մինչև տնտեսություն, գյուղական համայնքների զարգացում, մշակութային վերածնունդ, առողջապահություն ու ֆինանսներ: Այս գործակալությունների համագործակցությունը նպատակ է հետապնդում ստեղծել ինստիտուտներ և ծրագրեր, որոնք ի վիճակի են դիմակայել հասարակական, տնտեսական և մշակութային վերելքի ճանապարհին կանգնած ներկայիս մարտահրավերներին:

ՀՀԳ ոլորտում հսկայական նախաձեռնություն է ցուցաբերում Աղա Խան հիմնադրամը, որը դրամաշնորհային ծրագրերի միջոցով խրախուսում է առողջապահական, կրթական, գյուղական զարգացման, բնապահպանական և քաղաքացիական հասարակության ամրապնդմանն ուղղված ծրագրեր: Իր տարբեր գործակալությունների միջոցով հիմնադրամը գործունեություն է իրականացնում նաև ետխորհրդային այլ երկրներում (Տաջիկստան, Ղրղզստան, Ղազախստան) [31]:

AKDN գործում է իր տարբեր գործակալությունների միջոցով: AKDN մանդատը ընդգրկում է բնագավառների լայն շրջանակ. բնապահպանություն, առողջապահություն, կրթություն, ճարտարապետություն, մշակույթ, միկրոֆինանսներ, գյուղական զարգացում, բնական աղետների կրճատում, մասնավոր-ոլորտ, պատմական քաղաքաների վերականգնում: AKDN Տաջիկստանում կառուցում է նաև Միջին Ասիայի համալսարանի երեք ճամբարներից մեկը, որպես Միջին Ասիայում իրականացվող ամենախոշոր միջազգային համալսարանի ծրագիր [34]: Համալսարանը ստեղծվել է 2000 թվականին երեք միջինասիական հանրապետությունների և Աղա Խան հիմնադրամի կողմից: Համալսարանի նպատակն է զարգացնել Միջին Ասիայի երկրների սոցիալական և տնտեսական վիճակը, ինչպես նաև օժանդակել տարածաշրջանի ժողովուրդներին՝ պահպանելու և զարգացնելու իրենց հարուստ մշակութային ժառանգությունը որպես ապագայի գլխավոր գրավական: Կենտրոնանալով տարածաշրջանի տնտեսական և սոցիալական զարգացման վրա՝ հիմնադրամը կարևորում է կրթության որակի բարձրացումն ու տարածումը: Հիմնադրամի մյուս կարևոր գործառույթն ազգային երաժշտության պահպանումն է և տարածումը: Աղա Խանի երաժշտական նախաձեռնությունը նպատակ է հետապնդում վերակենդանացնել և զարգացնել

Կենտրոնական Ասիայի երաժշտական արվեստը, ինչպես նաև խթանել տարածաշրջանի երաժշտության տարածումը:

Ուզբեկստան

Ուզբեկստանում գիտության ոլորտի ղեկավարումն իրականացվում է Գիտությունների ազգային ակադեմիայի կողմից: Երկրի գլխավոր արդյունաբերական ուղղություններն ունեն իրենց առանձին հետազոտական լաբորատորիաները (գազ, նավթ, հանքափորություն, տեքստիլ, ավտոմեքենաշինություն): Թեմատիկ ֆինանսավորման թեմաներն ընդգրկում են բնական և հումանիտար գիտությունների բոլոր ճյուղերը:

Ուզբեկստանի գիտնականներն ակտիվորեն մասնակցում են ԵՄ կազմակերպած և վերջիններիս կողմից ֆինանսավորվող ծրագրերում: Բնագիտական և հումանիտար գիտություններում իրականացնում են մի շարք միջազգային դրամաշնորհային ծրագրեր, իրականացվում են նաև բնապահպանական և տնտեսական խնդիրների և այլ համատեղ ծրագրեր [26]:

Թուրքմենստան

ԽՄ փլուզումից հետո Կենտրոնական Ասիայի երկրների գիտական զարգացումն ընթացավ տարբեր ուղղություններով: Թուրքմենստանը գնաց ամենամերժողական ուղիով: 1997 թվականին փակվեց Գիտությունների ազգային ակադեմիան և մի շարք այլ հետազոտական ինստիտուտներ: Սակայն այժմ գիտությունը վերակազմավորելու գործում թուրքմեն գործիչները սկսել են հետևել իրենց գործընկերներին: Սրա արդյունքում վերաբացվել է Գիտությունների ազգային ակադեմիան, ինչը հսկայական ազդեցություն է ունեցել երկրում գիտության հանդեպ վերաբերմունքի վերափոխման վրա: Ստեղծվել է նաև Թուրքմենիայի հետազոտական կրթական միավորումը, Թուրքմենիայի Գիտության և տեխնոլոգիայի բարձրագույն խորհուրդը [35]: Իհարկե, վերափոխման նախնական փուլն ընթացավ բավական ցավոտ, սակայն երկրի տնտեսության զարգացմանը զուգընթաց մասնավոր սեկտորն ավելի ու ավելի խորը և ակնհայտ է զգում գիտության բացակայությունը և գիտակցում վերջինիս

օգտակարությունը: Այժմ Թուրքմենստանը էներգիայի, գյուղատնտեսության, հեռահաղորդակցության և այլ ոլորտներում բարձրակարգ փորձագետների մեծ պահանջարկ ունի, քանի որ թուրքմեն գիտնականներից շատերը կա՛մ լքել են երկիրը, կա՛մ անցել են այլ ոլորտ, կա՛մ էլ բոլորովին դուրս են եկել գիտությունից: Երկրորդ, երկիրը կարիք ունի նաև հմուտ դասավանդողների, որոնք կկարողանան ներկայիս ժամանակակից տեխնոլոգիաների պայմաններում կրթել նոր սերունդ: Երրորդ, համաշխարհային էներգետիկ շուկաները կայուն չեն, ինչպես նաև հարատև չեն պետության բնական պաշարները, ուստի անհրաժեշտություն է առաջանում գտնել էներգիայի նոր աղբյուրներ [36]: Երկրի համար կարևոր է նոր ինովացիոն հետազոտական ուղղությունների ընտրությունը:

Աղյուսակ 3

Երկիր	Բնակչու-թյան թիվը (հազար մարդ)	HDI տեղը (Մարդկային զարգացման ցուցիչ)	ՀՆԱ (GDP) (Համախառն ներքին արդյունք)	ՀԱԵ (GNI) (Համախառն ազգային եկամուտ)	Եկամուտների GINI գործակից (Եկամուտների հավասար բաշխվածության ցուցիչ)	Կրթության մեջ ներգրավ. համախառն գործակից	Կրթության վրա ծախսվող գումարները	Ինտերնետից օգտվող. քանակ (%)	Inequality-adjusted Educ. index (մարդկային զարգացման ցուցիչի և կրթ.հարաբերակցություն)
Ռուսաստանի Դաշնություն	140.366	65	15.719	15.258	43.7	81.9	3.9	31.9	0.631
Ուկրաինա	45.433	69	6.591	6.535	28.2	90.0	5.3	10.5	0.795
Բելառուս	9.587	61	13.097	12.925	28.8	90.4	5.2	32.1	0.683
Մոլդովա	3.575	99	2.917	3.149	37.4	71.6	8.2	23.4	0.635
Հայաստան	3.090	76	5.286	5.494	30.2	74.6	3.0	6.2	0.675
Ադրբեջան	8.933	67	9.870	8.746	16.8	66.2	1.9	28.2	0.646
Վրաստան	4.219	74	4.946	4.901	40.8	76.7	2.9	23.8	0.749
Թուրքմենստան	5.176	87	7.627	7.052	-	73.9	4.3	1.5	0.647
Տաջիկստան	7.074	112	2.065	2.019	-	70.9	3.5	8.8	0.608
Լատվիա	2.240	48	13.224	12.944	36.3	90.2	5.0	60.4	0.778
Լիտվա	3.255	44	15.327	17.167	31.9	92.3	4.7	54.4	0.803
Էստոնիա	1.339	34	18.355	12.925	37.0	91.2	5.0	66.2	0.851
Ղազախստան	15.753	66	11.927	10.234	30.9	91.4	2.8	1.9	0.753
Ղրղզստան	5.550	109	2.332	2.291	33.5	77.3	6.6	16.1	0.611
Ուզբեկստան	27.794	102	3.084	3.084	-	72.7	9.5	9.0	0.672

7. Հումանիտար և հասարակական գիտությունների ներկա վիճակը Հայաստանի Հանրապետությունում

ՀՀ-ում հստակ տարանջատում հումանիտար և հասարակական գիտությունների համար դեռևս չկա, ուստի ստիպված ենք առաջնորդվել աշխարհում գոյություն ունեցող բաժանումներով: Հասարակական գիտությունների բնագավառն, ըստ Ֆրասկատիի դասակարգման, ընդգրկում է գիտական և գիտատեխնիկական գործունեության հետևյալ ոլորտները՝ հոգեբանություն, տնտեսագիտություն և գործարարություն, մանկավարժական գիտություններ, սոցիոլոգիա, իրավունք, քաղաքական գիտություններ, սոցիալական և տնտեսական աշխարհագրություն, զանգվածային լրատվություն և հաղորդակցություն, այլ հասարակական գիտություններ:

Աշխարհում ընդունված մեկ այլ բաժանման համաձայն հասարակական գիտությունների մեջ մտնում են՝ միջազգային հարաբերություններ, քաղաքագիտություն, հանրային կառավարում, սոցիոլոգիա, սոցիալական աշխատանք, իսկ հումանիտար գիտություններն ընդգրկում են՝ հնեաբանություն, արվեստ, պատմություն, լեզվաբանություն, փիլիսոփայություն, արևելագիտություն, աստվածաբանություն, գրականություն, իսկ Հայաստանի հանրապետության դեպքում՝ նաև հայագիտություն: Փաստորեն, տարբեր են մոտեցումները նաև աշխարհում:

Հայաստանի Հանրապետության բյուջեից ֆինանսավորվող հումանիտար և հասարակական գիտությունների բնագավառում ուսումնասիրություններ կատարող կազմակերպությունների թիվը կազմում է գիտական կազմակերպությունների ընդհանուր թվի մոտ 25 %-ը:

Հայաստանի Հանրապետության 2008-2009թ. պետական բյուջեից հասարակական և հումանիտար գիտությունների բնագավառում իրականացվող գիտական ծրագրերին և թեմաներին հատկացվել է գիտության ծախսերի համար նախատեսված ընդհանուր ֆինանսավորման ծավալների մոտ 18 տոկոսը (գիտության ընդհանուր ծախսերը կազմել են 8.355.609 մլն.): Պետական բյուջեի միջոցների հաշվին իրականացվել են գիտական և

գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորման բազմաթիվ ծրագրեր, որոնք կատարվել են 29 գիտական կազմակերպություններում և բարձրագույն ուսումնական հաստատություններում, որոնցից 10-ը ներկայացնում են ՀՀ գիտությունների ազգային ակադեմիան, 11-ը՝ Կրթության և գիտության նախարարությունը, 2-ը՝ Մշակույթի նախարարությունը, 1-ը՝ Տարածքային կառավարման նախարարությունը, 1-ը՝ Քաղաքաշինության նախարարությունը, 1-ը՝ Քաղծառայության խորհուրդը, ինչպես նաև «Էթնոս» էթնո-մշակութային գիտական հետազոտությունների կենտրոն հասարակական կազմակերպությունը և այլն: 2008-2009 թվականների տվյալներով՝ հասարակական և հումանիտար գիտությունների բնագավառում իրականացվող պետական գիտական ծրագրերում և թեմաներում ընդգրկված գիտաշխատողների թիվը մոտ 980-ն է[3], որոնցից 482-ը կին է, 498-ը՝ տղամարդ: Հասարակական և հումանիտար գիտություններում ընդգրկված շուրջ 980 գիտաշխատողներից գիտական աստիճան ունեն 674-ը, որոնցից 198-ն ունեն գիտության դոկտորի գիտական աստիճան, իսկ 476-ը՝ գիտության թեկնածուի: Ստորև բերում ենք գիտական աշխատողների միջին տարիքի բաշխումն ըստ գիտության ճյուղերի ըստ սեռի (Նկար 1ա), ըստ գիտական աստիճանի (Նկար 1բ):

Հայաստանի Հանրապետությունում միայն 2008-2009թթ. ընթացքում հումանիտար և հասարակական գիտությունների բնագավառում գիտական աստիճանի վկայագիր են ստացել 491 մարդ, որից 41-ը՝ դոկտորի, 450-ը՝ թեկնածուի [37]:

Հումանիտար և հասարակական գիտությունների բնագավառում ատենախոսությունների հիմնական արդյունքների և դրույթների հրատարակման համար Հայաստանի Հանրապետության բարձրագույն որակավորման հանձնաժողովի կողմից ընդունվող պարբերական գիտական հրատարակությունների քանակը 2008-2009 թվականներին շուրջ 42 է, որոնցից 25-ը հրատարակվում են հայերեն, 4-ը՝ ռուսերեն, 1-ը՝ անգլերեն լեզուներով:

[3] Ներկայացված տվյալներն ամբողջական չեն, քանի որ որոշ կազմակերպությունների կողմից տվյալներ չեն տրամադրվել:

Նկար 1ա. Գիտական աշխատողների միջին տարիքի բաշխումը գիտության տարբեր ճյուղերում ըստ սեռի:



Նկար 1բ. Գիտական աշխատողների միջին տարիքի բաշխումը գիտության տարբեր ճյուղերում ըստ գիտական աստիճանի:



Ըստ գիտական և գիտատեխնիկական գործունեություն իրականացնող գիտական կազմակերպությունների և բարձրագույն ուսումնական հաստատությունների ներկայացրած անձնագրերի և տարեկան հաշվետվությունների տվյալների՝ հումանիտար և հասարակական գիտությունների բնագավառում 2008-2009թթ. հրատարակվել է 5438 գիտական աշխատություն, որոնցից 5043-ը լույս է տեսել Հայաստանում, 256-ը՝ ԱՊՀ-ում, 139-ը՝ արտասահմանում (տե՛ս Նկար 2): Դրանց մեջ ռուսերեն լեզվով հրապարակումները կազմում են 10 %, անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն և այլ եվրոպական լեզուներով հրապարակումները՝ 5 %:



Նկար 2. 2008-2009թթ. ՀՀԳ բնագավառի գիտական աշխատությունների բաշխումն ըստ հրապարակման տեղի:



Նկար 3. 2008-2009թթ. ՀՀԳ բնագավառի գիտական աշխատությունների բաշխումն ըստ հրապարակման տեսակի:

Ստորև բերված է հումանիտար և հասարակական գիտությունների բնագավառի գիտաշխատողների բաշխումն ըստ ՀՀԳ ճյուղերի:



1	պատմագիտություն	5	մանկավարժություն	9	ճարտարապետություն
2	բանասիրություն	6	իրավագիտություն	10	սոցիոլոգիա
3	տնտեսագիտություն	7	հոգեբանություն	11	քաղաքագիտություն
4	փիլիսոփայություն	8	արվեստագիտություն		

Նկար 4. Հումանիտար և սոցիալական գիտություններում ընդգրկված աշխատակիցների բաշխումն ըստ ճյուղերի:

Հումանիտար և հասարակական գիտությունների բնագավառում ամենաշատ թվով թեկնածուներ և դոկտորներ կան պատմական, տնտեսագիտական և բանասիրական գիտությունների բնագավառներում: Ստորև բերում ենք գիտությունների դոկտորների և թեկնածուների սեռային բաշխումն ըստ գիտության ճյուղերի (Նկար 5 ա,բ)

Նկար 5ա. Գիտությունների դոկտորների և թեկնածուների տոկոսային բաշխումն ըստ գիտության ճյուղերի (տղամարդիկ):



Նկար 5բ. Գիտությունների դոկտորների և թեկնածուների տոկոսային բաշխումն ըստ գիտության ճյուղերի (կանայք):



Հումանիտար և հասարակական գիտությունների բնագավառում առկա են մի շարք խնդիրները և թերություններ, որոնք խոչընդոտում են ոլորտի արագ զարգացմանը: Նշենք դրանցից մի քանիսը.

1. գիտական հետազոտությունները հիմնականում չեն արտացոլում ու անհրաժեշտ գիտական հենքով չեն ապահովում հանրապետությունում տեղի ունեցող հասարակական և տնտեսական փոփոխություններն ու զարգացումները,
2. ենթակառուցվածքները և նյութատեխնիկական բազան չեն համապատասխանում ժամանակակից գիտության պահանջներին,
3. թույլ են գիտական հետազոտություններ – հասարակական զարգացումներ կապերը, ցածր է տնտեսական, քաղաքական, հասարակական զարգացումների գիտական հիմնավորվածության մակարդակը,
4. անբավարար է հայերեն լեզվով ժամանակակից մասնագիտական և գիտամեթոդական գրականության հրատարակման մակարդակը,
5. ցածր է գիտական և գիտամանկավարժական կադրերի վերարտադրության արդյունավետությունը և շարունակվում է բարձր մասնագիտական մակարդակ ունեցող կադրերի արտահոսքը,
6. գիտական և գիտամանկավարժական կադրերի պատրաստման ձևն ու բովանդակությունը չեն համապատասխանում ժամանակակից գիտության պահանջներին,
7. ցածր է ատենախոսությունների մասնագիտական մակարդակը, դրանց թեմաները միտված չեն հանրապետական, տարածաշրջանային և համընդհանուր մարտահրավերների լուծումներին ուղղված հետազոտությունների իրականացմանը,
8. փոքր թիվ են կազմում ոլորտի համընդհանուր մարտահրավերների լուծումներին միտված ու համաշխարհային գիտական հասարակությանը հասանելի հրապարակումները,

9. ցածր է միջազգային համագործակցության, միջազգային գիտական տարածքի հետ ինտեգրվածության մակարդակը[4]:

ՀՀ-ում հումանիտար և հասարակական գիտությունների բանագավառում ուսումնասիրություն կատարող հաստատությունները կարելի է բաժանել հետևյալ խմբերի՝ պետական ֆինանսավորմամբ, մասնակի պետական ֆինանսավորմամբ և ոչ պետական ֆինանսավորմամբ կազմակերպություններ: Առաջին խմբի մեջ հիմնականում մտնում են ՀՀ ԳԱԱ ինստիտուտները, երկրորդի մեջ՝ բուհերը և գերատեսչական ենթակայության ինստիտուտները, երրորդի մեջ՝ անկախ գիտական կենտրոնները (think-tank):

ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ

ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի պատմության ինստիտուտը հիմնադրվել է 1943 թվականին և գտնվում է ՀՀ Կրթության և գիտության նախարարության գերատեսչական ենթակայության տակ: Ինստիտուտի գործունեության նպատակն է՝ գիտական, հետազոտական, գիտակրթական, խմբագրական, հրատարակչական աշխատանքների կազմակերպումն ու իրականացումը, գիտական կադրերի պատրաստումը, հանրապետական և միջազգային գիտական կազմակերպությունների հետ համագործակցությունը և համատեղ գիտական ծրագրերի իրականացումը [39]: Ներկայումս պատմության ինստիտուտի աշխատակիցները 127-ն են, որոնցից 57-ը՝ կանայք են: Գիտաշխատողների թիվը 95 է, որոնցից 36-ը՝ կին: Ինստիտուտն ունի ՀՀ ԳԱԱ 3 իսկական և 2 թղթակից անդամ, գիտությունների 25 դոկտոր և գիտությունների 48 թեկնածու: Աշխատակիցների միջին տարիքը 50 է:

Ինստիտուտի գործունեության հիմնական հետազոտություններն ընթանում են երեք ուղղությամբ. հայոց պետականության և հայ առաքելական եկեղեցու պատմություն, հայ ազգային-ազատագրական շարժումների և հասարակական-

[4] ՀՀ ԿԳՆ ԳՊԿ Հասարակական գիտությունների զարգացմանը նպաստող ծրագիր, էջ 4-5:

քաղաքական մտքի պատմություն, աղբյուրագիտություն և պատմագրություն, որոնցում ընդգրկված են 77 աշխատակից. 62 գիտաշխատող, այդ թվում 26 երիտասարդ գիտաշխատող (35-ից ցածր տարիքի): Աշխատանքներում ընդգրկված են նաև 9 ասպիրանտ:

Ներկայումս ինստիտուտի կազմում գործում են 7 գիտական բաժիններ (հին դարերի, միջին դարերի, նոր և նորագույն շրջանի, հայկական հարցի և հայոց ցեղասպանության, սփյուռքի և հայ գաղթօջախների, հայ պարբերական մամուլի և հասարակական մտքի պատմության), և Մեսրոպ Արքեպիսկոպոս Աշճյան կենտրոնը: Ինտիտուտի աշխատակիցները 2008 - 2009 թվականների ընթացքում հրատարակել են շուրջ 299 աշխատանք, որոնցից՝ 217 հոդված, 49 անուն գիրք, մասնակցել են շուրջ 27 գիտաժողովի աշխատանքներին: Տպագրված նյութից 272-ը հրատարակվել է ՀՀ-ում, 12-ը՝ ԱՊՀ-ում, 15-ը՝ արտասահմանում[5]:

ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտ

ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտը հիմնադրվել է 1955 թվականին: Ներկայումս ինստիտուտի աշխատակիցները 111-ն են, որոնցից 41-ը՝ կանայք են: Ինստիտուտի գիտաշխատողների թիվը 97 է, որոնցից 30-ը՝ կին: Ինստիտուտն ունի ՀՀ ԳԱԱ 1 իսկական և 1 թղթակից անդամ, գիտությունների 15 դոկտոր և գիտությունների 58 թեկնածու: Աշխատակիցների միջին տարիքը 46 է:

Ինստիտուտի գործունեության հիմնական հետազոտությունները ընթանում են հետևյալ ուղղություններով. ՀՀ ժողովրդագրության արդիական հիմնախնդիրներ, ՀՀ տնտեսական ներուժի արդյունավետ օգտագործման հիմնախնդիրներ տնտեսական միջազգային ինտեգրման պայմաններում, ՀՀ ֆինանսական և ներդրումային համակարգի զարգացման հիմնախնդիրները, ֆինանսական համակարգի կատարելագործման հիմնախնդիրներ, տնտեսության իրական հատվածի արդիական

[5] Այստեղ և հետագայում տվյալները վերցված են կազմակերպության կողմից ներկայացված ՀՀ գիտական և գիտատեխնիկական գործունեությամբ զբաղվող կազմակերպության “Անձնագրից”, 30.04.2010:

հիմնախնդիրներ, սոցիալ-ժողովրդագրական արդիական հիմնախնդիրներ, տնտեսության արտաքի հատվածի արդիական հիմնախնդիրներ, տնտեսագիտության տեսության և հայ տնտեսագիտական մտքի պատմության հիմնախնդիրներ: Հետազոտություններում ընդգրկված են 103 աշխատակից՝ 99 գիտաշխատող,այդ թվում 13 երիտասարդ գիտաշխատող: Աշխատանքներում ընդգրկված է նաև 11 ասպիրանտ:

Ինտիտուտի աշխատակիցները 2008-2009 թվականների ընթացքում հրատարակել են շուրջ 136 աշխատանք, որոնցից՝ 103 հոդված, 22 անուն գիրք, մասնակցել են մի շարք տեղական և արտասահմանյան գիտաժողովների: Տպագրված նյութի զգալի մասը հրատարակվել է ՀՀ-ում, 7-ը՝ ԱՊՀ-ում:

ՀՀ ԳԱԱ Հնագիտության և Ազգագրության ինստիտուտ[6]

ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտը հիմնադրվել է 1959 թվականին: Հիմնական հետազոտական ուղղություններն են. քարի դարի (Հայկական լեռնաշխարհ և հարակից երկրներ); բրոնզի և երկաթի դարաշրջանների հնագիտությունը, սոցիալ-տնտեսական պատմությունը, արվեստը և առասպելաբանությունը (Հայկական լեռնաշխարհ և Մերձավոր Արևելք); Ուրարտուի և հարակից երկրների հնագիտությունը, սոցիալ-տնտեսական պատմությունը, կրոնը և արվեստը; անտիկ Հայաստանի հնագիտությունն ու սոցիալ-տնտեսական պատմությունը, արվեստը և կրոնը; միջնադարյան Հայաստանի և Մերձավոր Արևելքի հարակից երկրների հնագիտությունը, պատմությունը և մշակույթը; Հայկական լեռնաշխարհի և հայկական սփյուռքի վիմագրությունը; հայ բանահյուսությունը; հայ բանահյուսության փաստագրումը և մշակումը; հին Հայաստանի առասպելաբանությունը, հայերի և նրանց նախնիների մարդաբանությունը; Հայաստանի և սփյուռքահայության ազգագրությունը, հոգևոր և աշխարհիկ ավանդական մշակույթը;

[6] ՀՀ ԳԱԱ Հնագիտության և Ազգագրության ինստիտուտն, ինչպես նաև հումանիտար և հասարակական գիտությունների ոլորտի մի քանի այլ կազմակերպություններ “Անձնագիր” չեն ներկայացրել:

հայերի և Հայաստանում բնակվող այլ ազգությունների էթնոսոցիոլոգիան [40]: Ինստիտուտն ունի ՀՀ ԳԱԱ 1 իսկական և 2 թղթակից անդամ:

ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտ

ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտը հիմնադրվել է 1971 թվականին: Արևելագիտության ինստիտուտն ուսումնասիրում է Մերձավոր և Միջին Արևելքի, Կովկասի, Արևելյան Ասիայի երկրների ու ժողովուրդների պատմությունը, սոցիալ-քաղաքական, միջազգային և տարածաշրջանային հարաբերությունները, մշակույթը, կրոնը, ազգային փոքրամասնությունների և էթնիկական խմբերի խնդիրները և այլն, հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը: Ինստիտուտն ունի հետևյալ հետազոտական բաժինները՝ հին արևելքի, քրիստոնյա արևելքի, արաբական երկրների, Թուրքիայի, Իրանի, Արևելյան Ասիայի երկրների և քրդագիտական ուսումնասիրությունների խումբը: Վերոհիշյալ խնդիրների հետ միասին ինստիտուտում աշխատանք է կատարվում արևելյան աղբյուրների ուսումնասիրության ուղղությամբ, մասնավորապես, արաբական, թուրքական, պարսկական և վրացական աղբյուրները հայերի և Հայաստանի մասին և հայկական աղբյուրները արևելյան ժողովուրդների մասին: Ինստիտուտի գիտահետազոտական աշխատանքներում որոշակի տեղ ունի նաև մերձավորարևելյան երկրների և Կովկասի հայ համայնքների պատմության և սոցիալ-տնտեսական վիճակի, այդ երկրներում նրանց քաղաքական և տնտեսական դերի, ինչպես նաև հարևան երկրների հետ հայ ժողովրդի պատմամշակութային դարավոր հարաբերությունների լուսաբանությունը [41]:

Արևելագիտության ինստիտուտի աշխատակիցները 65-ն են, որոնցից 32-ը՝ կանայք են: Գտաշխատողների թիվը 56 է, որոնցից 24-ը՝ կին: Ինստիտուտն ունի ՀՀ ԳԱԱ 2 թղթակից անդամ, գիտությունների 16 դոկտոր և գիտությունների 20 թեկնածու: Աշխատակիցների միջին տարիքը 48 է:

Ինտիտուտի աշխատակիցները 2008-2009 թվականների ընթացքում հրատարակել են շուրջ 157 աշխատանք, որոնցից՝ 93 հոդված, 36 անուն գիրք, մասնակցել են շուրջ 28

գիտաժողովի աշխատանքներին: Տպագրված նյութից 145-ը հրատարակվել է ՀՀ-ում, 4-ը՝ ԱՊՀ-ում, 8-ը՝ արտասահմանում:

ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ

Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի առաքելությունն է 20-րդ դարի առաջին ցեղասպանությանը վերաբերող հիմնախնդիրների ակադեմիական, գիտական հետազոտությունը և վերլուծությունը, ինչպես նաև տեքստային և վիզուալ նյութի ցուցադրությունը և ցեղասպանության դեմ միջազգային հանրության պայքարին աջակցությունը: Ինստիտուտի նպատակներն են.

1. իրականացնել մինչև ցեղասպանությունը և ցեղասպանության տարիներին Օսմանյան կայսրությունում արևմտահայերի կյանքին վերաբերող ֆոտոնյութի, փաստաթղթերի և այլ վավերագրերի հավաքում, ուսումնասիրություն և ներկայացում,
2. զարգացնել համագործակցությունը ամբողջ աշխարհում ցեղասպանության, հատկապես հայոց ցեղասպանության ուսումնասիրությամբ զբաղվող կազմակերպությունների և անձանց հետ,
3. ստեղծել և զարգացնել Հայաստանի Հանրապետությունում ցեղասպանագիտության գիտական դպրոց,
4. բարձրացնել միջազգային հանրության իրազեկությունը 20-րդ դարի առաջին ցեղասպանության մասին [42]:

Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտը (ՀՑԹԻ) նաև գիտահետազոտական կենտրոն է, այն գործում է ՀՀ ԳԱԱ համակարգում:

Ինստիտուտն ուսումնասիրում է Օսմանյան կայսրությունում իրագործված հայոց ցեղասպանության պատմությունը: Հիմնական աշխատանքներն ուղղված են պատմավավերագրական նյութերի, արխիվային փաստաթղթերի, լուսանկարների գիտական հետազոտությանը և նոր տվյալների հավաքագրմանը: Ինստիտուտը նյութեր ու փաստաթղթեր է ձեռք բերում տարբեր միջազգային արխիվներից: Թանգարանը նաև հավաքում, համակարգում և մուտքագրում է ցեղասպանության ականատեսների

վկայություններ: Պահվող փաստաթղթերը, վկայությունները թարգմանվում և հրատարակվում են ինստիտուտի կողմից:

Ցեղասպանության ինստիտուտի աշխատակիցները 66-ն են, որոնցից 46-ը՝ կանայք են: Գիտաշխատողների թիվը 16 է, որոնցից 11-ը՝ կին: Ինստիտուտն ունի գիտությունների 3 թեկնածու: Աշխատակիցների միջին տարիքը 32 է:

Ինտիտուտի աշխատակիցները 2008-2009 թվականների ընթացքում Հայաստանում հրատարակել են 14 հոդված:

ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտ

ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության և իրավունքի ինստիտուտը հիմնադրվել է 1969 թվականին: Ինստիտուտում հիմնարար հետազոտություններ են տարվում հետևյալ հինգ գիտական ուղղություններով. փիլիսոփայություն, սոցիոլոգիա, քաղաքագիտություն, իրավագիտություն և հոգեբանություն:

Փիլիսոփայության գծով հետազոտություններ են տարվում հայ փիլիսոփայության և գեղագիտության պատմության, ազգային մշակույթի պատմափիլիսոփայական վերլուծության, ժամանակակից բնագիտության փիլիսոփայական հիմնախնդիրների շուրջ: Սոցիոլոգիական և քաղաքագիտական մշակումները նվիրված են անցումային հասարակության, Հայաստանում սոցիոլական տրանսֆորմացիայի, միգրացիայի և հասարակական օտարվածության երևույթներին, Ղարաբաղյան խնդրի քաղաքական-իրավական հիմքերի և քաղաքակրթությունների բախման հիմնահարցերին: Իրավագիտական ուսումնասիրությունները նվիրված են հայ իրավական մտքի պատմության, ՀՀ սահմանադրական իրավունքի և իրավական պրակտիկայի հիմնախնդիրներին: Հոգեբանական վերլուծություններն ուսումնասիրում են նոր սոցիալական ու քաղաքական իրավիճակներում անձի հոգեբանական հարմարման խնդիրներին [43]:

Ինստիտուտում հետազոտություններն իրականացվում են հետևյալ բաժիններում.

հայ փիլիսոփայության պատմություն, գիտության փիլիսոփայություն և մեթոդաբանություն, սոցիալական փիլիսոփայություն, սոցիոլոգիա, իրավունք, քաղաքագիտություն, հոգեբանություն:

Ինստիտուտն իրականացնում է հետևյալ գիտական թեմաները. հայոց փիլիսոփայության պատմություն; հայ հասարակության սոցիալ-քաղաքական հիմնախնդիրներ /սոցիոլոգիական հետազոտություն/, ազգային պատմությունը և մշակույթը ժամանակակից պատմափիլիսոփայական և քաղաքագիտական տեսությունների լույսի տակ, պետահիրավական հետազոտություններ: Նշված գիտական թեմաներում ընդգրկված է 23 աշխատակից, որոնցից՝ 9 գիտաշխատող, այդ թվում՝ 1 երիտասարդ գիտաշխատող: Ինստիտուտի աշխատակիցները 39-ն են, որոնցից 15-ը՝ կանայք են: Գիտաշխատողների թիվը 34-ն է, որոնցից 10-ը՝ կին: Ինստիտուտն ունի ՀՀ ԳԱԱ 2 իսկական և 1 թղթակից անդամ, գիտությունների 14 դոկտոր և գիտությունների 16 թեկնածու: Աշխատակիցների միջին տարիքը 61 է:

Ինտիտուտի աշխատակիցները 2008-2009 թվականների ընթացքում հրատարակել են շուրջ 75 աշխատանք, որոնցից՝ 61 հոդված, 3 անուն գիրք, մասնակցել են շուրջ 11 գիտաժողովի աշխատանքներին: Տպագրված նյութից 63-ը հրատարակվել է ՀՀ-ում, 9-ը՝ ԱՊՀ-ում, 3-ը՝ արտասահմանում:

ՀՀ ԳԱԱ Հ.Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի Հ.Աճառյանի անվան լեզվի ինստիտուտը հիմնադրվել է 1943 թվականին: Ինստիտուտի գործունեության հիմնական ոլորտներն են. հայերենագիտության հիմնական խնդիրները, հայոց լեզվի կառուցվածքը և գործառությունը, նրա պատմությունը և համեմատական քերականությունը, գրական լեզվի կանոնարկման խնդիրները, գրական արևելահայերենի և արևմտահայերենի փոխհարաբերության խնդիրները, տերմինաբանության մշակումը, լեզվի ուսուցման մեթոդիկան, ստուգաբանական, երկլեզվյան, բարբառային և տերմինաբանական բառարանների կազմումը [44]:

Ինստիտուտի գործունեության հիմնական հետազոտություններն ընթանում են հետևյալ ուղղություններով. ժամանակակից հայերենի կառուցվածքի և գործառության ուսումնասիրություն, հայերենի պատմական զարգացման ուսումնասիրություն, հայերենի բարբառագիտական ատլաս, կիրառական լեզվաբանություն, որոնցում ընդգրկված է 62 աշխատող, որոնցից՝ 52 գիտաշխատող, այդ թվում՝ 9 երիտասարդ գիտաշխատող:

Ինստիտուտի աշխատակիցները 69-ն են, որոնցից 48-ը կանայք են: Գիտաշխատողների թիվը 58 է, որոնցից՝ 41-ը կին: Ինստիտուտն ունի ՀՀ ԳԱԱ 2 թղթակից անդամ, գիտությունների 5 դոկտոր և գիտությունների 36 թեկնածու: Աշխատակիցների միջին տարիքը 56 է:

Ինտիտուտի աշխատակիցները 2008-2009 թվականների ընթացքում հրատարակել են շուրջ 102 աշխատանք, որոնցից 27 հոդված, 18 անուն գիրք, մասնակցել են շուրջ 57 գիտաժողովի աշխատանքներին: Տպագրված նյութից 99-ը հրատարակվել է ՀՀ-ում, 3-ը՝ արտասահմանում:

ՀՀ ԳԱԱ Մ.Աբեղյանի անվան Գրականության ինստիտուտ

ՀՀ ԳԱԱ Մ.Աբեղյանի անվան գրականության ինստիտուտը հիմնադրվել է 1943 թվականին: Ինստիտուտի գործունեության հիմնական ոլորտներն են. հայ գրականության միջնադարյան, նոր և նորագույն շրջանների պատմությունը, ազգային գրականության տեսական խնդիրները, հայ գրականության դասականների գիտական հրատարակությունը, հայ գրականության միջազգային կապերը, հայ գրականության ազգային առանձահատկությունները [45] :

Ինստիտուտի գործունեության հիմնական հետազոտություններն ընթանում են հետևյալ ուղղություններով. ազգային արժեքների գեղարվեստական մարմնավորումը 19-րդ դարի և 20-րդ դարասկզբի հայ գրականության մեջ, Ն.Աղբալյանի ու Լևոն Շանթի երկերի հրատարակությունները, հայ նորագույն գրականության պատմության

հիմնախնդիրները, քաղաքակրթությունների երկխոսությունը և գրական գործընթացը լեհ և ֆրանսիական պատմագրական հուշարձաններում, 20-րդ դարի հայ գրականությունը համաշխարհային գրականության համատեքստում, որոնցում ընդգրկված է 24 գիտաշխատող, այդ թվում՝ 4 երիտասարդ գիտաշխատող:

Ինստիտուտի աշխատակիցները 58-ն են, որոնցից 32-ը՝ կանայք են: Գիտաշխատողների թիվը 51 է, որոնցից՝ 27-ը կին: Ինստիտուտն ունի ՀՀ ԳԱԱ 2 իսկական անդամ, գիտությունների 13 դոկտոր և գիտությունների 29 թեկնածու: Աշխատակիցների միջին տարիքը 54 է:

Ինտիտուտի աշխատակիցները 2008-2009 թվականների ընթացքում հրատարակել են շուրջ 102 աշխատանք, որոնցից՝ 84 հոդված, 15 անուն գիրք, մասնակցել են մի քանի գիտաժողովի աշխատանքներին: Տպագրված նյութից 94-ը հրատարակվել է ՀՀ-ում, 4-ը՝ ԱՊՀ-ում, 4-ը՝ արտասահմանում:

ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտ

ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտը հիմնադրվել է 1958 թվականին: Ինստիտուտն ունի հետևյալ գիտական ստորաբաժանումները. ճարտարապետության բաժին, կերպարվեստի բաժին, երաժշտության բաժին, ժողովրդական արվեստի բաժին, թատրոնի և կինոյի բաժին: 1966-ից ինստիտուտում գործում է ակադեմիկոս Ռ.Զարյանի անվան Շեքսպիրագիտական կենտրոնը: Ինստիտուտում աշխատանքներ են տարվում ազգային երաժշտության ու թատրոնի, ճարտարապետության և կերպարվեստի դասականների ստեղծագործական, հուշագրային, նամակագրական ժառանգության ակադեմիական հրատարակության, ֆոլկլորային նմուշների հավաքման, դասակարգման, վերծանության, համակարգչային մշակման ուղղությամբ [46]:

Արվեստի ինստիտուտում կատարվող ուսումնասիրությունների կարևոր ուղղություններն են կազմում հայ արվեստի գրեթե բոլոր տեսակների (կերպարվեստ, ճարտարապետություն, դեկորատիվ և կիրառական արվեստներ, երաժշտություն,

թատրոն, կինո և հեռուստատեսություն) պատմության և տեսության հիմնախնդիրները: Ինստիտուտի գիտական առաջնությունների ոլորտում մշտապես գտնվում են՝ ուրարտական, անտիկ շրջանի, միջնադարյան, նոր և նորագույն շրջանների հայ ճարտարապետությունը, կերպարվեստը, հայկական դեկորատիվ-կիրառական և ժողովրդական արվեստը, գորգարվեստը, ժողովրդական երաժշտությունը, միջնադարյան Հայաստանի հոգևոր և աշխարհիկ, նոր և նորագույն շրջանների հայ երաժշտությունը, թատրոնը, կինոն և հեռուստատեսությունը:

Ինստիտուտի գործունեության հիմնական հետազոտություններն ընթանում են հետևյալ ուղղություններով. հայ արվեստի զարգացումը XIX-XXդդ., հին և միջնադարյան Հայաստանի արվեստը, հայ երաժշտական ֆոլկլորի համալիր ուսումնասիրությունը, Կոմիտասի երկերի ժողովածուի հրատարակության նախապատրաստումը, որոնցում ընդգրկված է 61 աշխատող, որոնցից 47 գիտաշխատող, նաև՝ 10 երիտասարդ գիտաշխատող:

Ինստիտուտի աշխատակիցները 70-ն են, որոնցից 42-ը՝ կանայք են: Գիտաշխատողների թիվը 56 է, որոնցից 33-ը՝ կին: Ինստիտուտն ունի ՀՀ ԳԱԱ 3 թղթակից անդամ, գիտությունների 14 դոկտոր և գիտությունների 24 թեկնածու: Աշխատակիցների միջին տարիքը 58 է:

Ինտիտուտի աշխատակիցները 2008-2009 թվականների ընթացքում հրատարակել են շուրջ 170 աշխատանք, որոնցից՝ 120 հոդված, 26 անուն գիրք, մասնակցել են շուրջ 23 գիտաժողովի աշխատանքներին: Տպագրված նյութից 165-ը հրատարակվել է ՀՀ-ում, 2-ը՝ ԱՊՀ-ում, 3-ը՝ արտասահմանում:

ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն

ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնը հիմնադրվել է 1997 թվականին: Կենտրոնի հետազոտությունների հիմնական ոլորտներն են. Շիրակի տարածաշրջանի հնագիտական, ազգագրական և բնագիտական

ուսումնասիրությունները, պեղումները, նյութերի հավաքումն և համակարգումը [47]:

Ինստիտուտի գործունեության հիմնական հետազոտությունները ընթանում են հետևյալ ուղղություններով. Շիրակի հնագիտական եւ պատմա-ազգագրական ուսումնասիրությունները; Գյումրի-Ալեքսանդրապոլ-Լենինական առաջնային արտադրության և կենսապահովման մշակույթները; Ալեքսանդրապոլի գավառը XIXդ. վերջին եւ XX դարասկզբին; Շիրակի բանավոր ավանդույթի պրոֆեսիոնալ երաժշտությունը պատմաքննական լույսի տակ, որոնցում ընդգրկված է 24 աշխատող, որոնցից՝ 15 գիտաշխատող, այդ թվում՝ 3 երիտասարդ գիտաշխատող: Ծրագրերում ընդգրկված է նաև մեկ ասպիրանտ: Աշխատակիցների միջին տարիքը 48 է:

Կենտրոնի աշխատակիցների ընդհանուր թիվը 22-ն է, որոնցից 13-ը կանայք են: Գիտաշխատողների թիվը 17 է, որոնցից 10-ը՝ կին: Կենտրոնն ունի գիտությունների 2 դոկտոր և գիտությունների 7 թեկնածու: Աշխատակիցների միջին տարիքը 58 է:

Ինտիտուտի աշխատակիցները 2009 թվականի ընթացքում հրատարակել են շուրջ 43 աշխատանք, որոնցից 27 հոդված, 2 անուն գիրք, մասնակցել են շուրջ 14 գիտաժողովի աշխատանքներին: Տպագրված նյութերը հրատարակվել են ՀՀ-ում:

ՀՀ ՔՆ Ճարտարապետության ազգային թանգարան-ինստիտուտ

ՀՀ ՔՆ Ճարտարապետության ազգային թանգարան-ինստիտուտը ստեղծվել է 1990 թվականին: Թանգարան-ինստիտուտի գործունեության հիմնական հետազոտություններն ընթանում են հետևյալ ուղղություններով. արտերկրի հայ ճարտարապետների ստեղծագործական ժառանգության վերաբերյալ նյութերի հավաքում և ուսումնասիրում, ժամանակակից ճարտարապետաքաղաքաշինական խնդիրների ուսումնասիրությունները Հայաստանի փոքր ու մեծ քաղաքների և Երևանի օրինակով, որոնցում ընդգրկված է 22 աշխատող, որոնցից 18 գիտաշխատող (2 թեկնածու, 1 դոկտոր), նաև 3 երիտասարդ գիտաշխատող: Ծրագրերում ընդգրկված է նաև մեկ ասպիրանտ:

Թանգարան-ինտիտուտի աշխատակիցները 2008-2009 թվականների ընթացքում հրատարակել են շուրջ 19 աշխատանք, որոնցից 10 հոդված, 2 անուն գիրք, մասնակցել են 7 գիտաժողովի աշխատանքներին: Տպագրված նյութից 15-ը հրատարակվել է ՀՀ-ում, 3-ը՝ ԱՊՀ-ում, 1-ը՝ արտասահմանում:

Երվանդ Քոչարի թանգարան

Երվանդ Քոչարի թանգարանը հիմնադրվել է 1984 թվականին: Թանգարանը իրականացնում է "Երվանդ Քոչարի ստեղծագործությունը 20-րդ դարի կերպարվեստի համատեքստում. նորահայտ էջեր, մասունքներ" թեման, որի մեջ ընդգրկված է 3 գիտաշխատող (1 թեկնածու), նաև՝ մեկ երիտասարդ գիտաշխատող:

2008-2009 թվականների ընթացքում թանգարանի աշխատակիցները հրատարակել են 9 աշխատանք, այդ թվում 4 հոդված, 4 գիրք: Թանգարանի աշխատակիցները մասնակցել են նաև մեկ գիտական կոնֆերանսի: Բոլոր աշխատանքները հրատարակվել են Հայաստանում:

Երևանի պետական համալսարան

ԵՊՀ հիմնադրվել է 1919 թվականին: Ներկայումս մայր բուհն ունի 20 ֆակուլտետ (ներառյալ արտասահմանյան քաղաքացիների նախապատրաստման ֆակուլտետը), որից 12-ը հումանիտար և հասարակական գիտությունների բնագավառում. պատմության, հայ բանասիրության, ռուս բանասիրության, ռոմանագերմանական բանասիրության, իրավաբանության, միջազգային հարաբերությունների, աստվածաբանության, սոցիոլոգիայի, փիլիսոփայության և հոգեբանության, արևելագիտության, տնտեսագիտության և ժուռնալիստիկայի ֆակուլտետները: Բացի նշյալ ֆակուլտետներից ԵՊՀ-ում կան գիտական կենտրոններ, որոնք զբաղվում են հետազոտություններով հումանիտար և հասարակական գիտությունների բնագավառում. հայագիտական հետազոտությունների ինստիտուտ, եգիպտագիտության

հայկական կենտրոն, հունագիտության կենտրոն-գրադարան, եվրոպական ուսումնասիրությունների կենտրոն, քաղաքակրթական և մշակութային հետազոտությունների կենտրոն:

Հայագիտական ինստիտուտի հետազոտությունների հիմնական առանցքը հանդիսանում են հետևյալ ուղղությունները.

1. հայ ազգային ինքնության խնդրի, հայ ժողովրդի հոգեկերտվածքի և հոգեբանական առանձնահատկությունների ուսումնասիրություն (Հայ ինքնության բաժին),
2. հայ հնագիտություն (հնագիտական հետազոտությունների լաբորատորիա),
3. Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության պատմություն, պատմագրություն և մատենագիտություն (Ցեղասպանագիտության բաժին),
4. հայոց պետականության հիմնախնդիրների ուսումնասիրություն,
5. հայ եկեղեցու պատմություն,
6. հայ-օսմանական առնչություններ (Հայ-օսմանական առնչությունների բաժին),
7. հայ-վրացական կապեր (Վրացագիտության հայկական կենտրոն),
8. հայագիտական պատմագիտական և աղբյուրագիտական ժառանգության ուսումնասիրություն (աղբյուրագիտական լաբորատորիա),
9. արևմտահայ և արևելահայ լեզվական առնչությունների ուսումնասիրություն (Հայոց լեզվի ուսումնասիրության բաժին),
10. սփյուռքի տնտեսական, գիտական և մշակութային ներուժի ուսումնասիրություն, հայրենիք-սփյուռք կապերի հետազոտություն (Սփյուռքագիտության ամբիոն և բաժին),
11. վիրտուալ հայագիտություն (Վիրտուալ հայագիտության բաժին) [48]:

Եգիպտագիտության կենտրոնի հիմնական խնդիրներն են հին Եգիպտոսի քաղաքակրթության ուսումնասիրությունը և եգիպտագիտության հայկական դպրոցի հիմնադրումը, Հին Եգիպտոս - Միջին Արևելք - Հայաստան մշակութային-քաղաքակրթական առնչությունների ուսումնասիրությունը [49]:

Հունագիտության կենտրոն-գրադարանի գիտական աշխատանքի ուղղություններն են հայերենի և հունարենի լեզվական ու գրական առնչությունների ուսումնասիրությունը [49]:

Եվրոպական ուսումնասիրությունների կենտրոնի գործունեության հիմնական ուղղություններն ընդգրկում են եվրոպական իրավունքի, տնտեսության և քաղաքականության ոլորտներում հետազոտությունների իրականացումը, ներպետական, տարածաշրջանային և կարևորագույն ոլորտներին վերաբերող միջմասնագիտական ծրագրերի ուսումնասիրությունն ու իրականացումը [50]:

ԵՊՀ հումանիտար և հասարակական գիտությունների բնագավառում պետական ֆինանսավորմամբ աշխատող գիտաշխատողների թիվը 179-ն է, որից 68-ը՝ կին: ԵՊՀ-ն հումանիտար և հասարակական գիտությունների բնագավառում ունի ՀՀ ԳԱԱ 1 իսկական և 4 թղթակից անդամ: Գիտաշխատողներից 96 ունեն գիտությունների թեկնածուի, իսկ 48-ը՝ գիտություններ դոկտորի աստիճան: Աշխատակիցների միջին տարիքը 47 է: Հումանիտար և հասարակական գիտությունների բնագավառում ԵՊՀ-ում իրականացվում է 59 ծրագիր:

2008-2009 թվականների ընթացքում հումանիտար և հասարակական գիտությունների բնագավառում ուսումնասիրություններ կատարած ԵՊՀ աշխատակիցները հրատարակել են 2233 աշխատանք, որից 1683 հոդված, 356 անուն գիրք, մասնակցել են շուրջ 194 գիտական կոնֆերանսի աշխատանքներին: Տպագրված նյութի զգալի մասը հրատարակվել է Հայաստանում, 101-ը՝ ԱՊՀ-ում, 72-ը՝ արտասահմանում:

Ռուս-Հայկական (Սլավոնական) համալսարան

Հայ-ռուսական (սլավոնական) համալսարանը հիմնադրվել է 1997 թվականի օգոստոսի 29-ին Ռուսաստանի դաշնության և Հայաստանի հանրապետության կառավարությունների միջև Մոսկվայում ստորագրված «Երևան քաղաքում Հայ-ռուսական համալսարանի հիմնադրման և գործունեության պայմանների մասին

համաձայնագրի» հիման վրա: Համալսարանում գործում են հումանիտար և հասարակական գիտությունների 8 ֆակուլտետ. լրագրության, օտար լեզուների և ռեգիոնագիտության, քաղաքագիտության, հոգեբանության, սոցիալ-մշակութային սերվիսի և զբոսաշրջության, բանասիրության, տնտեսագիտության և իրավագիտության: Համալսարանի կազմում գործում են նաև գիտահետազոտական ինստիտուտներ, կենտրոններ, լաբորատորիաներ և գիտական խմբեր. Ռուս բանասիրության ինստիտուտ, հայ գրականության գիտահետազոտական կենտրոն, ռուսաց լեզվի գիտամեթոդական կենտրոն (ԳՄԿ), Քաղաքականության, տնտեսության և իրավունքի առկա խնդիրները գիտահետազոտական խումբ, «Կրթության փիլիսոփայությունը գլոբալացման պայմանների համատեքստում» գիտահետազոտական խումբ, «Ուսանողների հարմարվողականության խնդիրն օտար մշակութային միջավայրի պայմաններում» գիտահետազոտական խումբ , հոգեբանական դասընթացների լաբորատորիա [51]:

Հայ-ռուսական (սլավոնական) համալսարանի հայ գրականության գիտահետազոտական կենտրոնի խնդիրը հայ գրականության և մշակույթի ուսումնասիրության ընդլայնումն ու խորացումն է, ինչպես նաև հայ գրականության և մշակույթի իրողությունների քննությունը եվրոպական և արևելյան համատեքստում:

Համալսարանի հումանիտար և հասարակական գիտությունների ոլորտում պետական ֆինանսավորում ստացող աշխատակիցների թիվը 36-ն է, որից գիտաշխատող ՝ 14 - ը (4 կին, 10 տղամարդ): Հումանիտար և հասարակական գիտությունների բնագավառում համալսարանն ունի ՀՀ ԳԱԱ 1 թղթակից անդամ, գիտությունների 4 դոկտոր և 3 թեկնածու: Աշխատակիցների միջին տարիքը 41 է:

2008-2009 թվականների ընթացքում հումանիտար և հասարակական գիտությունների բնագավառում ընդգրկված աշխատակիցների կողմից հրապարակվել է շուրջ 963 աշխատանք. 782 հոդված, 103 գիրք, 78 գիտական կոնֆեևանսի թեզիս: Աշխատանքներից մոտ 66-ը հրատարակվել է ԱՊՀ-ում, 13՝ արտասահմանում:

Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան

Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանը 1922 թվականին ստեղծվել է որպես ԵՊՀ մանկավարժության ֆակուլտետ, այնուհետև վերափոխվել է ինստիտուտի, ապա՝ համալսարանի: Պետական ֆինանսավորմամբ հումանիտար և հասարակական գիտությունների բնագավառում ընդգրկված է 61 աշխատող, որից 36-ը՝ կին: Ինստիտուտն ունի ՀՀ ԳԱԱ 1 իսկական և 1 թղթակից անդամ: Գիտության թեկնածուների թիվը 38-ն է, իսկ գիտության դոկտորներինը՝ 14-ը: Աշխատակիցների միջին տարիքը 48 է:

2008-2009 թվականների ընթացքում հումանիտար և հասարակական գիտությունների բնագավառում համալսարանը հրապարակվել է 199 աշխատանք, որից՝ 144 հոդված, 5 անուն գիրք և գիտական կոնֆերանսների 2 թեզիս: Աշխատանքներից միայն մեկն է հրատարակվել արտասահմանում, մյուսները՝ ՀՀ-ում:

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանը հիմնադրվել է 1975 թվականին: ՀՊՏՀ գործունեության հիմնական ուղղություններն են կրթական արդիական ծառայությունների մատուցումը, բարձր որակավորում ունեցող մասնագետների, գիտամանկավարժական կադրերի, տնտեսագիտական ոլորտի մասնագետների պատրաստումը, ինչպես նաև բարձրագույն կրթություն ունեցող մասնագետների վերապատրաստումը, որակավորման բարձրացումը, տնտեսագիտության բնագավառում գիտական, ուսումնամեթոդական հետազոտությունների իրականացումը, կրթության և գիտության ինտեգրման հիման վրա ուսուցման բովանդակության կատարելագործումը, մասնագիտությունների ու մասնագիտացումների համակարգի մշակումն ու արմատավորումը [52] :

Պետական ֆինանսավորմամբ գիտաշխատողների թիվը 15-ն է, որից 11-ը կին է, այդ թվում գիտությունների 4 թեկնածու և 4 դոկտոր: Համալսարանն ունի ՀՀ ԳԱԱ 1 իսկական անդամ: Աշխատակիցների միջին տարիքը 51 է: 2005-2009 թվականներին

համալսարանն իրականացրել է հետևյալ ծրագրերը. Հայ կառավարչական միտքը XVIII-ից XX դարերում և պարադիգմայի փոփոխություններ XXI դարասկզբին, աշխատանքի վարձատրության կազմակերպման բարելավումը ՀՀ բանկային համակարգում, երկրորդային ռեսուրսաօգտագործման էկոլոգոտնտեսական ապահովումը ՀՀ-ում, ՀՀ տարածքում գործող բանկերի կողմից մատուցվող ծառայությունների վերլուծությունը և դրանց նկատմամբ պահանջարկը, որոնցում ներգրավված է եղել 25 աշխատող, որոնցից 19 գիտաշխատող, այդ թվում՝ 5 երիտասարդ գիտաշխատող:

2008-2009 թվականների ընթացքում համալսարանի աշխատակիցները հրատարակել են 478 աշխատանք, որից՝ 281 հոդված, 38 գիրք, մասնակցել են շուրջ 113 գիտական կոնֆերանսների աշխատանքներին: Աշխատանքներից 437-ը տպագրվել է Հայաստանում, 27-ը՝ ԱՊՀ-ում, իսկ 14 աշխատանք լույս է տեսել արտասահմանում:

Երևանի ճարտարապետության և շինարարության պետական համալսարան

Երևանի ճարտարապետության և շինարարության պետական համալսարանը հիմնադրվել է 1989 թվականին: Համալսարանի 10 ֆակուլտետներից հումանիտար և հասարակական գիտությունների բնագավառում ներգրավված են 4 ֆակուլտետ. ճարտարապետության և դիզայնի ֆակուլտետ, դիզայնի և համակարգչային նախագծման ֆակուլտետ, կիրառական արվեստի և պատմամշակութային տուրիզմի ֆակուլտետ, տնտեսագիտության ֆակուլտետ [53]:

Հումանիտար և հասարակական գիտություններում համալսարանի գիտական գործունեության ուղղությունները են.

- ճարտարապետության տեսություն և պատմություն, ճարտարապետական հուշարձանների վերականգնում
- շենքերի և կառույցների ճարտարապետություն
- քաղաքաշինություն, լանդշաֆտային ճարտարապետություն:

Պետական ֆինանսավորմամբ հումանիտար և հասարակական գիտությունների բնագավառի գիտաշխատողների թիվը 73-ն է, որից 30-ը՝ կին: Նրանցից 40 ունի գիտության թեկնածուի, իսկ 5-ը՝ դոկտորի գիտական աստիճան: Աշխատակիցների միջին տարիքը 43 է: Համալսարանը հումանիտար և հասարակական գիտությունների ոլորտում իրականացնում է մեկ թեմա՝ ՀՀ Ճարտարապետական (տեսություն, պատմություն, հուշարձանների վերակառուցում, արդյունաբերական և քաղաքացիական կառույցներ) և շինարարական (կոնստրուկցիաներ, նյութեր և տեխնոլոգիաներ) համալիրների կայուն զարգացման ուղիների բացահայտում, ճշգրտում, ներդրման առաջարկությունների և հանձնարարականների մշակում՝ մշտական համակարգային մոնիտորինգի կիրառմամբ, որում ներգրավված է 91 աշխատող, որոնցից՝ 88 գիտաշխատող, այդ թվում՝41-ը երիտասարդ գիտաշխատող: Աշխատանքներում ներգրավված է նաև 7 ասպիրանտ:

Բնագավառում 2008-2009 թվականներին հրատարակված աշխատանքների թիվը հասնում է 82-ի, որից՝ 48 ամսագիր, 5-ը գիրք, 19-ը գիտական կոնֆերանսի թեզիս: Հրապարակված նյութի ճնշող մեծամասնությունը հրատարակվել է ՀՀ-ում, 1-ը՝ ԱՊՀ-ում, 2-ը՝ արտասահմանում:

Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարան

Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարանը հիմնադրվել է 1962 թվականին: Համալսարանը ունի երեք ֆակուլտետ. օտար լեզուների; ռուսաց լեզվի, գրականության և օտար լեզուների; լեզվաբանության և միջմշակութային հաղորդակցության [54]:

ԵրՊԼՀ-ի գիտական հետազոտությունների հիմնական ուղղությունները

1. լեզվաքաղաքականություն,
2. ռոմանագերմանական բանասիրություն, ռուսագիտություն, հայագիտություն,

3. մանկավարժության և օտար լեզուների դասավանդման մեթոդիկայի տեսություն և պրակտիկա: Դպրոցական և բուհական դասագրքերի, բառարանների և ուսումնամեթոդական ձեռնարկների պատրաստում,

4. թարգմանության տեսության կիրառական հարցեր, գործնական թարգմանություն,

5. ընդհանուր լեզվաբանություն, կիրառական լեզվաբանություն, զուգադրական տիպաբանություն, տեքստի լեզվաբանություն,

6. ուսումնասիրվող լեզվի երկրի երկրագիտություն,

7. փիլիսոփայություն և հոգեբանություն: Դպրոցականների և դեռահասների հոգեբանություն,

8. գրականագիտություն, Եվրոպայի և Ամերիկայի երկրների գրականություն,

9. միջմշակութային հաղորդակցություն և մշակութաբանություն,

10. մարդու իրավունքներ և քաղաքացիական կրթություն: Փոխակերպվող հասարակության սոցիալ-տնտեսական և քաղաքական խնդիրները արդի ժամանակաշրջանում:

Պետական ֆինանսավորմամբ գիտաշխատողների թիվը համալսարանում 7-ն է (գիտությունների 5 թեկնածու), որից 5-ը՝ կին: Նրանց միջին տարիքը 44 է: Համալսարանը իրականացնում է հետևյալ ծրագրերը. հայերենը որպես ոչ մայրենի լեզու, միջէթնիկական ընկալումների յուրահատկությունները ժամանակակից հանրույթում, լեզուն որպես միջմշակութային հանդուրժողականության դաստիարակման գործիք, որոնցում ներգրավված է 7 գիտաշխատող, որից 4-ը՝ երիտասարդ գիտաշխատող:

2008-2009 թվականներին հրատարակվել է 30 աշխատանք՝ 23 անուն գիրք, 4 հոդված, գիտական կոնֆերանսի 3 թեզիս: Բոլոր նյութերը տպագրվել են Հայաստանում:

ՀՀ Մշակույթի նախարարության Պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոն

ՀՀ Մշակույթի նախարարության Պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոն պետական ոչ առևտրային կազմակերպությունը հիմնադրվել է 2003 թվականին: Կենտրոնի գիտահետազոտական ուղղություններն են. պատմամշակութային անշարժ հուշարձանների և հատուկ պահպանվող պատմամշակութային տարածքների հաշվառում, պետական ցուցակների կազմում և պարբերական մոնիտորինգի անցկացում; պատմամշակութային անշարժ հուշարձանների և դրանց համալիրների վավերագրում և վկայագրերի կազմում; պատմամշակութային անշարժ հուշարձանների, համալիրների և հատուկ պահպանվող պատմամշակութային տարածքների քարտեզագրում, պահպանական գոտիների նախագծերի կազմում; պատմամշակութային անշարժ հուշարձանների և դրանց տարածքների տեղագրական հանույթների և չափագրությունների կատարում; պատմամշակութային անշարժ հուշարձանների պետական թեմատիկ կադաստրի ստեղծում և վարում; ՀՀ տարածքում գտնվող պատմամշակութային վտանգված և վերականգնվող անշարժ հուշարձանների տարածքում հնագիտական պեղումների կատարում և արդյունքների գիտական հրատարակում; պատմամշակութային անշարժ հուշարձանների և հատուկ պահպանվող պատմամշակութային տարածքների ամրակայման, նորոգման, վերականգնման և բարեկարգման նախագծերի կազմում; հայկական պատմամշակութային ժառանգության գիտատեղեկատու շտեմարանի ստեղծում և թվայնացում; ՀՀ և այլ պետությունների տարածքում գտնվող հայկական պատմամշակութային ժառանգության ուսումնասիրում և հանրահռչակում; հայկական պատմամշակութային հուշարձանների համահավաք /«Դիվան»/ բազմահատորյակի և «Հուշարձան» տարեգրքի կազմում և հրատարակում:

Կենտրոնում ներգրավված է բազային ֆինանսավորման 24 աշխատակից, որից 10-ը՝ կին: Նրանցից 3-ն ունեն գիտությունների թեկնածուի, իսկ 1-ը՝ գիտությունների դոկտորի գիտական աստիճան:

2008-2009 թվականների ընթացքում կենտրոնը հրատարակել է 16 աշխատանք. 1 գիրք, 13 հոդված, որոնք լույս են տեսել Հայաստանում:

Հայաստանի ազգային արխիվ

Հայաստանի ազգային արխիվի հիմնական գիտական ուղղություններն են՝ արխիվագիտությունը և աղբյուրագիտությունը: Հայաստանի ազգային արխիվն իրականացնում է հետևյալ ծրագրերը. հայրենիք-սփյուռք մշակութային կապերը 1945-1985թթ. փաստաթղթերի ժողովածու, գաղթականության հիմնախնդրի լուծումը Հայաստանում 1918-1936թթ. փաստաթղթերի ժողովածու, ազգային արխիվի պահպանում (հայ ժողովրդի նոր և նորագույն շրջանի պատմության աղբյուրագիտական բազայի ստեղծում), որոնցում ներգրավված է 27 գիտաշխատող, այդ թվում՝ 3 երիտասարդ գիտաշխատող:

Պետական ֆինանսավորմամբ գիտաշխատողների թիվը 25 է, որից 14-ը՝ կին: Նրանցից 10-ն ունի գիտությունների թեկնածուի, իսկ 1-ը՝ գիտությունների դոկտորի գիտական աստիճան: Աշխատակիցների միջին տարիքը 56 է:

2008-2009 թվականների ընթացքում արխիվի աշխատակիցները հրատարակել են 42 աշխատանք, որից 40-ը հոդված, 2-ը կոնֆերանսի թեզիս: Բոլոր նյութերը լույս են տեսել Հայաստանում:

"Մատենադարան" Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ

"Մատենադարան" Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտը հիմնադրվել է 1939 թվականին: Մանտենադարանի գիտական գործունեության հիմնական ուղղություններն են. հայերեն և այլալեզու հին ձեռագրերի, արխիվային վավերագրերի, հայագիտական գրականության ու մամուլի՝ պահպանումը, վերանորոգումը, նմանատիպ վերարտադրությունը և հետազոտումը,

պատճենահանումը, այդ թվում՝ թղթային, միկրոժապավենային, թվային /էլեկտրոնային/ և ժամանակակից այլ հնարավոր ձևաչափերով և տեսքով, պահպանման, վերականգնման սպասարկման և գիտահետազոտական համակարգերում ժամանակակից տեխնոլոգիաների ներդրումը, ձեռագրացուցակների, մատենագիտական ուղեցույցների, գիտական հանդեսների, բնագրերի և ուսումնասիրությունների, ալբոմների, բուկլետների և այլ գիտական ու քարոզչական-գովազդային նյութերի պատրաստումն ու հրապարակումը; Հայագիտության և միջնադարագիտության բնագավառներում հիմնարար ծրագրերի և հետազոտությունների իրականացումը; Համանման գործունեություն ծավալող օտարերկրյա գիտական շրջանակների /այդ թվում՝ կազմակերպությունների և ֆիզիկական անձանց/ հետ փոխշահավետ կապի հաստատումը, զարգացումը, փորձի փոխանակումը, համագործակցությունը [55]:

Մատենադարանի գիտական աշխատանքներում ներգրավված է պետական բազային և թեմատիկ ֆինանսավորման 60 աշխատակից, որից 56-ը՝ գիտաշխատող: Գիտաշխատողներից 29-ը կին է, 27-ը՝ տղամարդ: Աշխատակիցներից 26-ն ունի գիտությունների թեկնածուի, 7-ը՝ գիտությունների դոկտորի գիտական աստիճան: Աշխատակիցների միջին տարիքը 54 է:

Մատենադարանի աշխատակիցների գիտական գործունեության արդյունքում 2008-2009 թվականներին հրատարակվել է 105 աշխատանք, որից 74 հոդված, 30 անուն գիրք և մեկ գիտական կոնֆերանսի թեզիս: Նյութերից 72-ը լույս է տեսել Հայաստանում, 6-ը՝ ԱՊՀ-ում, 27-ը՝ արտասահմանում:

Պետական ֆինանսավորմամբ հումանիտար և հասարակական բնագավառների ուսումնասիրություններ են կատարվում նաև ոչ պրոֆիլային բուհերում՝ կենտրոնների կամ ամբիոնների կողմից:

Բացի ՀՀ բյուջեից ֆինանսավորվող հումանիտար և հասարակական գիտությունների բնագավառում ուսումնասիրություններ կատարող կազմակերպություններից ՀՀ-ում գործում են մի շարք հասարակական

կազմակերպություններ, գիտական կենտրոններ, ակումբներ, որոնք հետազոտություններ են իրականացնում հումանիտար և հասարակական գիտությունների բնագավառներում, հատկապես տնտեսական, քաղաքական, սոցիոլոգիական, կրթական և այլ ասպարեզներում: Նշյալ կազմակերպությունները մեծապես տարբերվում են պետական ֆինանսավորում ստացող կազմակերպություններից: Հետազոտական այս կենտրոնները հիմնականում ներգրավված են ժամանակակից խնդիրների ուսումնասիրման, լուսաբանման և վերլուծության մեջ, ունեն ֆինանսավորման այլ աղբյուրներ (ֆինանսավորվում են տեղական կամ արտասահմանյան դոնորների, դեսպանատների կողմից), իրենց ուսումնասիրությունները կատարում են տարբեր լեզուներով (հիմնականում անգլերեն), ունեն իրենց ուսումնասիրությունների էլեկտրոնային տարբերակները ինտերնետային կայքերում, ինչը մեծապես ավելացնում է վերջիններիս պոտենցիալ լսարանը: Այժմ մի քանի նման կազմակերպության մասին ավելի մանրամասն:

Նորավանք գիտակրթական հիմնադրամ

«Նորավանք» գիտակրթական հիմնադրամի կարգավիճակը մի փոքր տարբերվում է մյուսներից: Հիմնադրամն ունի ինչպես պետական, այնպես էլ ֆինանսավորման այլ միջոցներ: Հիմնադրամը ստեղծվել է 2000թ. ՀՀ կառավարության որոշմամբ: Նրա կանոնադրության համաձայն՝ Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նախագահը ՀՀ գործող վարչապետն է: «Նորավանքը» ՀՀ առաջատար կազմակերպություններից է և հանդես է գալիս որպես ռազմավարական հետազոտությունների և նորարարական մշակումների կենտրոն [56]:

Հիմնադրամում գործում են հետևյալ կենտրոններ.

1. «Հայագիտության կենտրոնը», որի խնդիրն է ուսումնասիրել հայ համայնքների պատմությունը, արդի խնդիրները, ինչպես նաև մշակել հայության ինտեգրման

մեթոդներ: «Հայագիտության կենտրոնն» իր աշխատանքներն իրականացնում է ՀՀ Սփյուռքի նախարարության հետ համագործակցելով:

2. «Տեղեկատվական հետազոտությունների կենտրոն», որը զբաղվում է ներկա տեղեկատվական հակամարտության պայմաններում Հայաստանի և հայության տեղեկատվական անվտանգության հարցերով:
3. «Քաղաքական հետազոտությունների կենտրոն», որը կատարում է տարածաշրջանային աշխարհաքաղաքական և աշխարհատնտեսական զարգացումների մոնիթորինգ՝ ՀՀ ազգային անվտանգության համատեքստում:
4. «Ուսումնական կենտրոնը») կազմակերպում է հրատապ թեմաների շուրջ դասընթացներ և ամառային դպրոցներ:

«Նորավանքը» հրատարակում է «21-րդ ԴԱՐ» (հայերեն, ռուսերեն և անգլերեն), ինչպես նաև «Գլոբուս Ազգային անվտանգություն» հանդեսները: Վերջին տարիներին հիմնադրամը թողարկել է ավելի քան 150 անուն գիրք, ամսագրեր և այլ հրապարակումներ:

Ազգային և միջազգային ուսումնասիրությունների հայկական կենտրոն

Ազգային և միջազգային ուսումնասիրությունների հայկական կենտրոնը հանդիսանում է ռազմավարական հետազոտությունների անկախ կենտրոն: Այն ՀՀ նախկին արտգործնախարար Ռաֆի Հովհաննիսյանի նախաձեռնությամբ հիմնադրվել է 1994 թվականին: Կենտրոնը հետազոտություններ է իրականացնում արտաքին և ներքին քաղաքականության խնդիրների վերաբերյալ, կատարում տարաբնույթ վերլուծություններ: Հետազոտությունների զգալի մասը միտված են Լեռնային Ղարաբաղի, հայ-թուրքական հարաբերությունների, ցեղասպանության, ՀՀ տնտեսության և քաղաքականության վերլուծությանը: Կենտրոնն որպես իր հիմնական նպատակ է դիտում հասարակության քաղաքական գիտակցության բարձրացմանը նպաստելը, ինչպես նաև կառավարության և ընդիմության հետ աշխատելը:

Կենտրոնն իր հետազոտություններն իրականացնում է ժամանակակից ռազմավարական և մեթոդոլոգիական հիմքի վրա, արևմտյան մոտեցումներով: 2009 թվականի ընթացքում կենտրոնի աշխատակիցներն արտասահմանում հրատարակել են շուրջ 27 զեկույց, մասնակցել են բազմաթիվ միջազգային կոնֆերանսների, կազմակերպել միջոցառումներ նաև Հայաստանում: Ազգային և միջազգային ուսումնասիրությունների հայկական կենտրոնը յուրաքանչյուր ամիս հրատարակում է տեղեկագիր, ինչպես նաև՝ տարեգիրք (2009) [57]: Կենտրոնը համագործակցում է մի շարք արտասահմանյան գիտական կենտրոնների հետ, այդ թվում նաև Թուրքիայում:

Կենտրոնի ֆինանսավորումն իրականացվում է արտասահմանյան և տեղական դոնորների տրամադրած միջոցների հաշվին [58]:

Կովկասի ինստիտուտ

Կովկասի ինստիտուտը միաժամանակ հանդիսանում է գիտական կենտրոն և կրթական հաստատություն (իրականացնում է մագիստրոսական ծրագրեր քաղաքագիտության և լրագրության բնագավառներում): Ինստիտուտը հետազոտություններ է իրականացնում Հյուսիսային և Հարավային Կովկասի տնտեսական և քաղաքական ոլորտներում, ներառյալ էթնոքաղաքական հակամարտությունները, տարածաշրջանային անվտանգության հիմնահարցերը, քաղաքացիական հասարակության և այլ խնդիրները:

Ինստիտուտը հրատարակում է նաև գրքեր (6 տարեգիրք), վերլուծություններ, քաղաքական նյութեր և այլն, որոնք հրապարակվում են տարբեր լեզուներով: Ինստիտուտը մեծ աշխատանք է իրականացնում նաև իր կատարած հետազոտությունները հասարակության հասանելի դարձնելու ուղղությամ, ինչի նպատակով կազմակերպվում են եռակողմ բաց հանդիպումներ գիտական համայնքի, լրատվամիջոցների և քաղաքական գործիչների միջև:

Ինստիտուտը նույնպես ֆինանսավորվում է արտասահմանյան դոնորների կողմից [59]:

Սիվիլիթաս հիմնադրամ

Սիվիլիթաս հիմնադրամը ստեղծվել է 2008 թվականին ՀՀ նախկին արտգործնախարար Վարդան Օսկանյանի կողմից: Սիվիլիթաս հիմնադրամը որպես իր նպատակ է հռչակում աջակցել Հայաստանի պետականության ամրապնդմանը և ժողովրդի բարօրությանն ուղղված ջանքերին, նպաստել Հայաստանի քաղաքացիների իրավունքների ու պարտականությունների լիարժեք դրսևորմանը, ինչպես նաև խրախուսել յուրաքանչյուր քաղաքացու պատասխանատվությունը՝ ունենալու իր ուրույն ներդրումը ժողովրդավարության կայացման գործում: Սիվիլիթաս հիմնադրամը փորձում է նպաստել հասարակության կողմից միջազգային և տարածաշրջանային զարգացումների լայն ընկալմանը և աջակցել Կովկասում ու դրա սահմաններից դուրս խաղաղության ու անվտանգության ապահովմանը:

Հիմնադրամն իր գործունեությունն իրականացնում է երկու գլխավոր ծրագրերի միջոցով՝ Զարգացում և ժողովրդավարություն, Միջազգային հարաբերությունների խորհուրդ: Առաջին ծրագիրն ուղղված է գյուղական համայնքների տնտեսության զարգացմանը և քաղաքացիական հասարակության ձևավորմանը, իսկ երկրորդ ծրագրի շրջանակներում հիմնադրամը հետազոտություններ և վերլուծություններ է կատարում տարբեր քաղաքական և միջազգային հարցերի շուրջ:

Հիմնադրամը հրատարակում է նաև գրքեր՝ նվիրված Հայաստանի տնտեսական, քաղաքական և սոցիալական խնդիրներին, հոդվածներ, զեկույցներ և այլն [60]:

Քաղաքացիական հասարակության ինստիտուտ

Քաղաքացիական հասարակության ինստիտուտ հասարակական կազմակերպությունը հիմնադրվել է Երևանում 1998 թվականին: ՔՀԻ նպատակն է աջակցել Հայաստանում ազատ ժաղովրդավարական հասարակության կայացման գործընթացին: Կազմակերպության գործունեությունը ուղղված է առաջին հերթին

հասարակական կազմակերպությունների և պետական մարմինների աշխատանքի արդյունավետության բարձրացմանը, քաղաքացիական հասարակության ձևավորմանը: ՔՀԻ–ն հանդիսանում է մարդու իրավունքների միջազգային ֆեդերացիայի (FIDH) հայաստանյան անդամ կազմակերպությունը: ՔՀԻ–ն իր գործունեությունը ծավալում է հետևյալ բնագավառներում. քաղաքացիական հասարակության զարգացում, քրեակատարողական համակարգի բարեփոխումներ, մարդու իրավունքներ և հանրային իրազեկություն, խաղաղաշինություն և կոնֆլիկտի հաղթահարում, շահերի պաշտպանություն և լոբբինգ, կամավորական հնարավորություններ երիտասարդության համար, միջնակարգ կրթության բարեփոխումներ, տեղեկատվության ազատություն և հակակոռուպցիոն գործընթացներ [61]:

Ինստիտուտը հրատարակում է մարդու իրավունքների վերաբերյալ զեկույցներ, ունի նաև մարդու իրավունքների վերաբերյալ առանձին կայքէջ:

Մարդկային զարգացման միջազգային կենտրոն (ICHD)

Մարդկային զարգացման միջազգային կենտրոնն իր գործունեությունը սկսել է 2000 թվականի մարտից: Կենտրոնի հիմնական սկզբունքներն և նպատակներն են. միավորել հասարակական, գիտական, մշակութային և գործարար ոլորտների կարող և առաջադեմ միտքը, հզորացնել ժողովրդավարական մեխանիզմներն ու սերմանել ազատ շուկայական մեխանիզմներ՝ նպաստելով կովկասյան երկրների տարածաշրջանային համագործակցության և տնտեսական զարգացման ռազմավարությունների մշակման գործընթացին:

ՄԶՄԿ առաքելությունն է աջակցել քաղաքականության մշակման, որոշումների կայացման գործընթացների բարելավմանը՝ հետազոտությունների, վերլուծությունների, ուսուցման, վերապատրաստման և խորհրդատվության միջոցով: Այս առաքելությունն իրագործվում է տնտեսական զարգացման և սոցիալական ապահովության կարևոր խնդիրների վերաբերյալ լուծումներ առաջադրելու ճանապարհով, որոնք քաղաքականություն մշակողներին, գիտնականներին և մամուլին հասանելի դարձնելու

համար ՄԶՄԿ օգտագործում է բազմազան միջոցներ: Նպատակներն են՝ ուժեղացնել քաղաքացիական հասարակությունը, նպաստել տարածաշրջանային ինտեգրմանը և խաղաղության ամրապնդմնանը, նպաստել քաղաքացիական հասարակության զարգացմանը և աղքատության կրճատմանը, օժանդակել կառավարման և պետական հատվածի բարեփոխումներին, զարգացնել ազատ շուկայական ինստիտուտները, ձևավորել տեղական ինքնակառավարման արդյունավետ փորձ, բարձրացնել շրջակա միջավայրի խնդիրների վերաբերյալ տեղեկացվածությունը, բարձրացնել առողջության առաջնային պահպանության խնդիրների վերաբերյալ իրազեկվածությունը, խթանել հայկական մշակույթը [62]:

Կենտրոնի կողմից հրապարակվել են բազմաթիվ վերլուծական նյութեր՝ «Տեսակետներ», «Համառոտագրեր», հոդվածներ, հետազոտություններ, գրքույկներ, բրոշյուրներ և տեղեկատվական թերթիկներ, կազմակերպվել են հազարից ավելի աշխատանքային հանդիպումներ, միջազգային կոնֆերանսներ և գործարար հանդիպումներ: Կենտրոնը ներկայացրել է նաև “Հայաստան-սփյուռք հարաբերությունների զարգացման կոնցեպցիան”, “Ազգային հակակոռուպցիոն ռազմավարությունը”, նաև՝ “Հայաստանում միգրացիայի կառավարման ռազմավարություն” փաստաթղթերը, որոնցից առաջին երկուսը կիրառվել են ՀՀ կառավարության կողմից [57]:

Եվրասիա համագործակցության հիմնադրամ (EPFA)

Եվրասիա համագործակցության հիմնադրամը հանդիսանում է Եվրասիա հիմնադրամի հետնորդ կազմակերպությունը, որը հիմնադրվել է 1992 թվականին՝ նախկին Խորհրդային Միության երկրներում քաղաքացիական հասարակության զարգացմանն աջակցելու նպատակով: Հայաստանում հիմնադրամն իր գրասենյակը բացել է 2007 թվականին: Եվրասիա համագործակցություն հիմնադրամը գործում է Հայաստանում, Ադրբեջանում և Վրաստանում և կոչված է հզորացնելու սոցիալական արդարության և տնտեսական բարգավաճման ասպարեզներում էական

փոփոխությունների հասնելու ջանքերը, ինչպես նաև իրականացնել կոնկրետ ծրագրեր:

Եվրասիա համագործակցություն հիմնադրամը իր գործունեությունը ծավալում է հետևյալ մանդատային ուղղություններով՝ նպաստել քաղաքացիական մասնակցությանը, աջակցել փաստերով հիմնավորված հետազոտություններին, խթանել կորպորատիվ և համայնքային բարեգործության մշակույթի ձևավորմանը Հայաստանում:

Հիմնադրամն իրականացնում է մի շարք ծրագրեր: Աջակցություն Հայաստան-Թուրքիա հարաբերությունների բարելավման ծրագրի նպատակն է աջակցել Հայաստան-Թուրքիա հարաբերությունների բարելավմանը՝ նոր բիզնես համագործակցության և տարածաշրջանային մասնագիտական կապերի ստեղծման, հայ-թուրքական հարաբերությունների կարգավորմանը նպաստող համագործակցության հաստատման գործընթացում քաղաքացիական հասարակության ներգրավման, ինչպես նաև պետական երկխոսության և շփումների համար բարենպաստ միջավայրի ստեղծման միջոցով:

Երիտասարդական բանկ ծրագրի նպատակն է ապահովել երիտասարդների ակտիվ մասնակցությունը երկրի գյուղական համայնքների զարգացմանը:

Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոններ ծրագրի նպատակն է խթանել հասարակագիտական հետազոտություններն ու պետական քաղաքականության վերլուծությունը Հարավային Կովկասում:

Ծրագիրի երեք հիմնական նպատակներն են՝ հզորացնել հասարակագիտության ոլորտում տեղացի հետազոտողների, գիտնականների և հանրային քաղաքականությամբ զբաղվողների կարողությունները, խթանել գիտնականների, հետազոտողների և մասնագետների համագործակցությունը՝ ի նպաստ հասարակական զարգացումների և հանրային քաղաքականության վերլուծությանն ու մշակմանը, ինչպես նաև հետազոտական համայնքների ձևավորմանն ու զարգացմանը, հավելել տեղացի հետազոտողների և մասնագետների համար բարձրորակ, ժամանակակից հետազոտական ռեսուրսների մատչելիությունը:

Արտահայտման ազատություն նախագծի նպատակն է ծանոթացնել

հասարակությանը և կառավարությանը արտահայտման ազատության միջազգային չափանիշներին, միջոցներ ձեռք առնել լրատվամիջոցների նկատմամբ կիրառվող այնպիսի սահմանափակումների դեմ, ինչպիսիք են ինքնագրաքննությունը և հեռարձակող լրատվամիջոցների վրա կառավարության վերահսկողությունը:

Եվրոպա ծրագրի նպատակն է նպաստել Հայաստանում Արևելյան գործընկերության արդյունավետ իրագործմանը:

Հայ-ադրբեջանական հարաբերությունների անաչառ լուսաբանման ծրագրի նպատակն է ավելացնել ճշգրիտ և անաչառ լրատվությունը Հայաստանի և Ադրբեջանի միջև եղած հարաբերությունների վերաբերյալ, Լեռնային Ղարաբաղի հակամարտության վերաբերյալ և նպաստել համագործակցող խմբագիրների, լրագրողների և ԶԼՄ ոլորտի հասարակական կազմակերպությունների ցանցի ստեղծմանը Հայաստանում և Ադրբեջանում [63]:

Հիմնադրամի հետազոտությունները տարբեր լեզուներով հրապարակվում են կազմակերպության կայքէջում:

Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոն

Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոններ «ՀՌԿԿ» ծրագիրը Հայաստանի, Ադրբեջանի և Վրաստանի մայրաքաղաքներում հիմնադրված ռեսուրսների և ուսուցման կենտրոնների ցանց է, որի նպատակն է խթանել հասարակագիտական հետազոտություններն ու պետական քաղաքականության վերլուծությունը Հարավային Կովկասում [64]:

Նյու Յորքի Կարնեգի կորպորացիայի և Եվրասիա համագործակցություն հիմնադրամի համագործակցությամբ գործող ծրագիրը կոչված է ապահովելու բարձրորակ հետազոտական ռեսուրսների մատչելիությունը, զարգացնելու հետազոտական կարողությունները և ընդլայնելու հասարակական գիտությունների հետազոտողների և քաղաքական գործիչների միջև երկխոսությունն ու համագործակցությունը: Կենտրոնի ֆինանսների 2/3-ը գալիս է Կարնեգի

կորպորացիայից Եվրասիա համագործակցության հիմնադրամի միջոցով, սակայն ֆինանսներ ստանում է նաև այլ դոնորներից:

ՀՌԿԿ-ն հետազոտական հրապարակում է էլեկտրոնային հանդեսներ, բրոշյուրներ, մասնագիտական ռեսուրսներ, հետազոտական ծրագրեր: Ներկայումս կենտրոնի հիմնական հետազոտական թիրախը հանդիսանում է կոռուպցիայի հիմնախնդիրը Հայաստանում, իսկ Ադրբեջանի և Վրաստանի հետ համատեղ իրականացվում են նաև սոցիալական պաշտպանության և սոցիալական ներառության վերաբերյալ հետազոտություններ [57]:

Քաղաքացիական հասարակության և տարածաշրջանային զարգացման ինստիտուտ

Քաղաքացիական հասարակության և տարածաշրջանային զարգացման ինստիտուտը գիտական կենտրոն է, որը գրանցված է որպես հասարակական կազմակերպություն: Ներկայումս ինստիտուտն իրականացնում է հայ գիտական կենտրոնների և արտասահմանյան կենտրոնների համագործակցության ծրագիր, որը ֆինանսավորվում է USAID-ի կողմից: Ինստիտուտի հետազոտությունների հիմնական ուղղություններն են՝ քաղաքացիական հասարակության զարգացումը, ներքին քաղաքականության հիմնախնդիրները, տարածաշրջանային զարգացումները, անվտանգության և հակամարտությունների լուծման հնարավորությունները, տարածաշրջանային համագործակցության և կայուն զարգացման հարցերը: Ուսումնասիրությունների արդյունքները անգլերեն և ռուսերեն լեզուներով հրապարակվում են կազմակերպության կայքէջում [57]:

Գլոբալիզացիայի և տարածաշրջանային համագործակցության վերլուծական կենտրոն

Գլոբալիզացիայի և տարածաշրջանային համագործակցության վերլուծական կենտրոնը հիմնադրվել է 2002 թվականին: Այն հետազոտություններ է իրականացնում

տարածաշրջանային համագործակցության, եվրոպական ինտեգրման, հայ-թուրքական և հայ-ադրբեջանական հարաբերությունների շուրջ: Կատարված հետազոտությունների արդյունքները հրատարակվում են գրքերի, հոդվածների, զեկույցների ձևով և զետեղված են կազմակերպության կայքէջում: Կենտրոնը ֆինանսավորվում է հիմնականում արտասահմանյան դոնորների, դեսպանատների կողմից [65]:

Երևան մամուլի ակումբ

Երևան մամուլի ակումբը հիմնադրվել է 1995 թվականին: Կազմակերպությունը հիմնականում իրականացնում է գործնական բնույթի հետազոտություններ, որոնք վերաբերում են մամուլի և հեռուստաընկերությունների ոլորտին, որոշ չափով նաև տարածաշրջանային համագործակցությանը, տարածաշրջանային, եվրոպական ինտեգրմանը և հակամարտությունների կարգավորմանը: Ակումբն ակտիվ է նաև մամուլի վերաբերյալ օրենսդրական նախաձեռնություններում:

Հետազոտությունների վերաբերյալ կատարվում են հրապարակումներ, ակումբի աշխատակիցները կապեր ունեն արտասահմանյան փորձագետների հետ, կազմակերպում են կոնֆերանսներ, կլոր սեղաններ, աշխատանքային տարբեր խմբեր [57]:

Եվրասիա հետազոտական ինստիտուտ

Եվրասիա հետազոտական ինստիտուտի հայաստանյան մասնաճյուղը հիմնադրվել է 2008 թվականին, որի նպատակն է հանդիսանում ուժեղացնել հայ-ռուսական հարաբերությունները, հատկապես կրթության և քաղաքական հետազոտությունների բնագավառում: Ինստիտուտի ֆինանսավորումը գալիս է կազմակերպության ռուսաստանյան գլխավոր գրասենյակից: Կազմակերպության հետազոտական ոլորտներն ընդգրկում են՝ հայ - ռուսական հարաբերությունները, տարածաշրջանային անվտանգության և Հայաստան-ԱՊՀ հարաբերությունների

հիմնահարցերը: Ինստիտուտի հրապարակումները տարբեր լեզուներով հասանելի են կազմակերպության կայքէջում [57]:

Ակադեմիական համագործակցության և օժանդակության հայկական ասոցիացիա

Ակադեմիական համագործակցության և օժանդակության հայկական ասոցիացիան (ԱՐՄԱԿԱԴ) հիմնադրվել է 2007 թվականին: Կազմակերպության նպատակն է նպաստել Հայաստանի Հանրապետությունում ակադեմիական համագործակցության խթանմանը, ինֆորմացիոն հոսքերի արագ փոխանցմանը և ակադեմիական ուղղվածության ծրագրերի իրականացմանը: Կազմակերպությունը նպատակ է հետապնդում՝

- նպաստել միջազգային ասպարեզում Հայաստանի Հանրապետության ակադեմիական վարկանիշի և հեղինակության բարձրացմանն ու ամրապնդմանը,
- օժանդակել գիտական ուղղությունների և մասնագիտությունների զարգացմանը, համապատասխան մասնագետների որակավորման բարձրացմանը,
- նպաստել ՀՀ և արտերկրյա գիտնականների փորձի փոխանակման, փոխշահավետ համագործակցության համար անհրաժեշտ մեխանիզմների ստեղծմանը,
- ապահովել գործուն տեղեկատվական կապեր արտասահմանում գտնվող գիտական շրջանակներ ներկայացնող հայ և այլազգի մասնագետների և Հայաստանի Հանրապետությունում նրանց գործընկերների միջև,
- նպաստել ՀՀ քաղաքացիների ներգրավմանը Հայաստանի և արտերկրի գիտական արդեն գործող ծրագրերում և նախագծերում, օժանդակել նրանց կողմից նմանատիպ ծրագրերի մշակմանն ու իրականացմանը [66]:

ԱՐՄԱԿԱԴ-ը կազմակերպում է դասախոսություններ, սեմինարներ, հանդիպումներ, համաժողովներ և այլ միջոցառումներ, հրապարակում տարբեր նյութեր: Իր

գործունեությունը ԱՐՄԱԿԱԴ-ը իրականացնում է կամավոր հիմքի վրա, անդամավճարներով:

Արարատ ռազմավարական հետազոտությունների կենտրոն

«Արարատ» ռազմավարագիտական կենտրոնի նպատակներն ու խնդիրներն են.

1. Վերլուծել միջազգային քաղաքականության՝ Հայաստանի շահերի վրա ազդող երևույթները:
2. Օգտակար լինել և՛ որոշում ընդունողների, և՛ հասարակության համար՝ բացահայտելով ու քննելով Հայաստանի անվտանգության յուրահատուկ իրադրությունը՝ իր մանրամասնություններով և առաջնահերթ լուծում պահանջող խնդիրներով հանդերձ:
3. Չեզոքացնել միջազգային ասպարեզում ադրբեջանա-թուրքական լայնամասշտաբ քարոզչությունը, քարոզել Հայաստանի և Արցախի Հանրապետությունների տեսակետները:
5. Ռազմահայրենասիրական գաղափարների և ավանդույթների քարոզումը Հայաստանում և սփյուռքում:
8. Հայկական բանակի հետագա բարելավմանն ուղղված պատճառաբանված առաջարկությունները:
9. Տարածաշրջանի պետությունների և Մեծ Մերձավոր Արևելքում շահեր ունեցող այլ տերությունների զինված ուժերի և նրանց ռազմական հայեցակարգերի վերլուծումները:
10. Ղարաբաղյան հակամարտության հնարավոր լուծումների վերլուծությունը:
11. Արցախի հայկականությունը փաստող պատմահիրավական համապարփակ թղթապանակի կազմումը:
12. Արցախի ազատագրության վերլուծումը ըստ միջազգային իրավունքի ինքնորոշման ու ինքնապաշտպանության մասին հիմնարար դրույթների:
13. Արցախի և Նախիջևանի պատմական ժողովրդագրության ուսումնասիրությունը:

14. Հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը հայոց զինված ուժերի և ռազմարվեստի պատմության հետազոտումը:
15. Հայաստան-Սփյուռք համագործակցության հզորացմանը նպաստող լուծումների որոնումը և համազգային միացյալ հայեցակարգի մշակումները:
16. Ռազմավարությանն ու անվտանգությանը վերաբերող դասական և ժամանակակից գրականության հայերեն թարգմանությունները և դրանց հրատարակումը:
17. Ռազմավարագիտության և անվտանգության տերմինների հայերեն բացատրական և եռալեզու (հայերեն-անգլերեն-ռուսերեն) բառարանների ստեղծումը [67]: Կենտրոնը ունի մի շարք հրապարակումներ Արցախի, Ջավախքի, հայոց բանակի, անվտանգության և այլ հիմնահարցերի վերաբերյալ:

Սոցիոմետր

Կազմակերպությունը հիմնադրվել է 1991 թվականին և հանդիսանում է անկախ սոցիոլոգիական ուսումնասիրությունների կենտրոն: Իրականացնում է քաղաքական և ընտրական հարցումներ, կրթական մակարդակի, աշխատաշուկայի, մարդկային ռեսուրսների օպտիմալացման վերաբերյալ սոցիոլոգիական ուսումնասիրություններ: Սոցիոմետրը կատարում է պետական, ինչպես նաև մասնավոր պատվերներ՝ տարբեր բնագավառներում հետազոտություններ կատարելու համար [57]:

Այսպիսով՝ ուսումնասիրելով հասարակական ու հումանիտար գիտությունների արդի վիճակը ՀՀ-ում՝ գալիս ենք համոզման, որ վերջիններս իրենց առկա հիմնախնդիրներով, զարգացման տեմպերով և ռեսուրսներով բավական հեռու են միջազգային ընդունված չափանիշներից: Ակնհայտ է, որ ոլորտում բացերը շատ են, որոնք անհապաղ և համալիր քայլերի կարիք ունեն: Մեծ է տարբերությունը նաև պետական և ոչ պետական հատվածների միջև, ինչը նույնպես մտահոգության տեղիք է տալիս:

8. Աղբյուրներ և գրականություն

1. http://ec.europa.eu/research/social-sciences/mission_en.html
2. *The Future of the Social Sciences and Humanities Final International Conference 22-23 October 2009,* Brussels, Belgium. www.iccr-international.org/...futures/.../2009-10-22_23-Programme.pdf
3. *Social Sciences and Humanities* - An Overview. Survey among Social Science and Humanities Researchers in Austria, Belgium, France, Germany, Israel, Netherlands, Poland, Sweden, United Kingdom and participants of EU FP5 and 6. www.iccr-international.org/ssh-futures/literature.html
4. Gibbons, Michael; Limoges, Camille; Nowotny, Helga et al. The New Production of Knowledge: The Dynamics of Science and Research in Contemporary Societies; Sage Publications, 1994. p.179-184
5. Luk van Langenhove, The status of social sciences in Europe, World Social Science Report, UNESCO, ISSC, 2010, pp. 82-87
6. Alberto Martinelli, Social science in the public space, World Social Science Report, UNESCO, ISSC, 2010, pp. 287-289
7. Ա. Մայիլյան, Լ. Ստեփանյան
8. www.nea.gov/about/Legislation/Legislation.html
9. www.sshrc-crsh.gc.ca
10. http://www.zpu-journal.ru/fundraising/management/articles/ Vorotnikov/
11. Grete M. Kladakis, European Research Funding Systems in the Humanities, European Network of Research Councils in the Humanities, Danish Research Agency, Report 1, Copenhagen, 2004.
12. www.metrisnet.eu, In the Vanguard of Research Strategy for the Research Council of Norway 2009 – 2012. www.forskningsradet.no/en/Article/Main_strategy_of_the_Research_Council/1193731376993
13. *Science policy in the humanities* Adolf Filáček. www.kav.cas.cz/data/Theory%20of%20Science%202005,%20No%201.pdf
14. Irish Research Council. http://www.irchss.ie/schemes/scheme09/IRCHSS_Fellowship_Project_TCs_2009-10.pdf
15. Country report on social sciences and humanities. www.metrisnet.eu
16. *AHRC Vision and Strategy* (Arts and Humanities Research Council) 2007-2012. http://www.ahrc.ac.uk/About/Policy/Documents/strategic%20plan%202007-2012.pdf
17. *USA strategy plan on humanities, http://www.neh.gov/whoweare/strategicplan.html*
18. *Social Sciences and Humanities Research Council f Strategic Plan 2006–2011*, Canada. dsp-psd.pwgsc.gc.ca/Collection/CR22-42-2006E.pdf
19. www.chass.org.au, *Strategic Plan 2009 – 2012 Council for the Humanities, Arts and Social Sciences*, Australia

20. The Ministry of Education and Science of Lithuania. *The strategy for developing social sciences and the humanities in Lithuania.* Vilnius 2004. www.smm.lt/smt/docs/leid_sarasai/hsm/SSH%20strategy-abstract.doc
21. National concept of the Republic of Latvia on research development. planipolis.iiep.unesco.org/.../Latvia/Latvia_National_development_plan_2007-2013.pdf
22. Global Social Sciences. www.globalsocialscience.org
23. *Institutional setting, policy instruments and organization of research funding for Social Sciences and Humanities (SSH) in Estonia,* GlobalSSH project background report. www.globalsocialscience.org
24. Augustinaitis, Spurga, Maciukaite-Zviniene, Grigaliunaite, Stracinskiene. 2006. Research on EU multilevel governance in Lithuania: A state of research. [http://www.connex-network.org/govdata/reports/Report-Lithuania.pdf].
25. International Social Science Council, World Social Science Report 2010, Knowledge Divides (UNESCO), unesdoc.unesco.org/images/0018/001883/188333e.pdf
26. Global Social Sciences. www.globalsocialscience.org
27. Воротников Ю., Гуманитарные науки в современной Росии: состояние и перспективы развития в оценке РГНФ. www.zpu-journal.ru/search/index.php?PAGEN_1=1&q
28. *The Foundation for Fundamental Research* (FFR) of the Republic of Belarus, www.nasb.gov.by
29. Rustavelli Foundation, www. rustaveli.org
30. International Journal for Academic Research. www.ijar.lit.az
31. *State Committee of Sciences of the Republic of Armenia,* www.scs.am
32. *Crisis for humanities and social sciences in National Academy of Sciences of Armenia,* by Lisa Natcharian. www.ansef.org
33. Agha Khan Development network. www.akdn.org
34. Agha Khan University. www.aku.edu
35. www.turkmenistan.gov.tm › ... › Science & Education
36. Rafis Abazov, Science in Turkmenistan, how far will reforms go? www.cacianalyst.org/?q=node/5150.
37. www.boh.am
38. ՀՀ ԿԳՆ ԳՊԿ Հասարակական գիտությունների զարգացմանը նպաստող ծրագիր, էջ 4-5: www. scs.am
39. http://www.academhistory.am/index.php?p=1&l=arm
40. http://www.sci.am/resorgs.php?oid=32&langid=2
41. http://orient.sci.am/about.php?id=1&langid=1
42. http://www.genocide-museum.am/arm/statement.php
43. http://www.ipsol.sci.am/about-history.php
44. www.sci.am/resorgs.php?oid=34&langid=2
45. http://www.sci.am/resorgs.php?oid=35&langid=2

46. http://www.sci.am/resorgs.php?oid=36&langid=2
47. http://www.sci.am/resorgs.php?oid=38&langid=2
48. http://www.ysu.am/site/index.php?page=11&lang=3
49. Երևանի Պետական Համալսարան, 2009-2010 ուստարվա գործունեություն, Երևան 2010, 15 625:
50. http://ces.am/
51. http://rau.am/index_arm.php?l=0&l1=1&l2=89&l3=177
52. www.asue.am
53. www.ysuag.am
54. www.brusov.am
55. www.matenadaran.am
56. http://www.noravank.am/arm/about.php
57. An assessment of research capacities in social sciences and humanities in Armenia. A report to the Academic Swiss Caucasus Net (ASCN). Caucasus Institute. Yerevan, May-September 2010.
58. www.acnis.am
59. www.caucasusinstituite.org
60. www.civilitasfoundation.org
61. www.csi.am
62. www.ichd.org
63. www.epfound.am
64. www.crrc.am
65. www.acgrc.am
66. www.armacad.info
67. http://www.ararat-center.org/index.php?p=48&l=arm